



Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

16415

Արևածագ

Ասմա՛ն ու Զեյզա՞ն
հետիւրս

Բաֆին 1901

891.99

Հ-62



ՊԱԿԵԾ. ԳՐԱՎԵՃԱԲ. Զ. ԳՐԻԳՈՐՅԱՆՑԻ

891.542-34

Հ-69

ՅՈՒՆԻ ՈՒ ԶԵՅՉՈՆԻ

ՀԵ ՔԻ ԱԹ Ը

ՓՈԽՆԴՐՈՒԹԻՒՆ ՏԱԾԿԵՐԼՈՒՑ

ՀԱՆԴԵՐՁ ԵՐԳԵՐՈՎ

ԱՇԽԱՏՅՈՒՐԵՅ ԱՇԽԱ ԶԵԽԱՆԻՒ



1901

ԹԻ ԳԼԻ Ա

Տիգրան Մովսես Վարդանեանցի
Типография М. Вартаняна, Вельяминовская ул. д. 7.

ՀՐԱՏ ՀԱՐԱԿ. ԿՈՎԿԵՍ. ԴՐԱՎԱՃԱՌ. Զ. ԳՐԻԳՈՐԵԱՆՑԻ

ԱՍՏԱՆԻ ՈՒ ԶԵՅՉՈՒ

894.3

Q-624 b-P-h-U-p-L

ՓՈԽԱԴՐՈՒԹԻՒՆ ՏԱԶԿԵՐՔՆԻՑ

1001
3584

10 **ՀԱՆԴԵՐ 2 ԵՐԳԵՐՈՎ**

ԱՇԽԱՏԱՄԻՐԵՑ ԱՇՀԳԴԻՒՆԻՆ



Տպարան Մովսես Վարդանեանցի
Tipografiia M. Vartanianca, Velyaminovska

2003

3642

ԱՍՏՐՆԻ ՈՒ ԶԵՅՉԱՆԻ ՀԵՖԻԼԹԸ.



ատմում են, որ թըքա-չայաստանի երգնկա քաղաքում ժամանակով մի երենլի ափուական մարդ կար Խոսրով-Բէկ անոնով։ Նա այնպէս հարուստ էր, այնպէս փարթամ, որ ոչ միայն Երգնկայի գուառում, այլ և ամբողջ փոքր-Ծսիայում յայտնի էր։ Բացի ոսկուց և արծաթից նա ունէր ընդարձակ հոգեր ու կալուածքներ, դաշտեր ու ագարակներ, զիւղեր ու անտառներ։ Այդ տեղերում ոչխարների ու կովերի հօտեր, ձիերի ու խոզերի ոհմակների էիր պատճում՝ հարցնում էիր, «ումն է»։ —Պատասխանում էին՝ «Խոսրով-Բէկինն է»։ Բէկն ապրում էր այնպիսի մի շքեղ ու զարդարուն տան մէջ, որ շատ ուրիշ բէկեր ու փաշաներ նախտնձում էին։ Սատուծոյ ամեն բարութիւն նրա տանից անպակաս էր, բազմաթիւ ծառաներ, հիւրեր, անցորդներ ու օտարականներ ամեն օր բէկի տանը ապրում, ուտում—խմում, փայելում էին նրա հիւրասիրութիւններ ու գոհ լինում թէ նրանից, թէ այդ ամենը պարզեղ ծիրոջից։ Ոչ ոք չը

Дозволено Цензурою Тифлисъ, 19-го Сентября 1901 г.

6005

կար, որ չը յարգէր, չը պատուէր ու չը սիրէր Խոս-
րով-Բէկին, որովհետև նա թէս հարուստ էր, բայց
զոռող, ամբարտաւան չէր, խեղճերի, տնանկների,
որբերի ու աղքատների հայրն ու մշտական բարե-
րարն էր. Թէս ազնուական էր, Բէկ էր, բայց այդ
բանով չէր պարզենում նա: Աշոտ ողորմած թագա-
ւորի պէս ամեն անգամ իւր հետ ճաշի էր նստացնում
ամենահասարակ մարդկանց՝ ուամիկներին, բանուոր-
ներին մինչև անգամ կոյրերին ու խեղանդամներին:
Ելդպիսով քանի զնում էր աւելի սիրելի էր դառնում
բէկը տեղական ժողովրդին ու ինքն էլ սիրում նը-
րանց: Ամենքն ասում էին թէ աշխարհում Խոսրավ-
Բէկի նման երջանիկ մարդ չը կայ, ինչ դարդ ունի
նա այդ ծով հարստութեան մէջ: Բայց նրան մօտ
մարդիկ զիտէին որ բէկը որքան էլ որ միշտ փառք է
տալիս Ամենակարողին, որքան էլ որ զոհ է իւր վի-
ճակից, դարձեալ երեսմ երբեմ մի տեսակ տիրում
էր ու մի բանի մասին մտածում:

Բէկի ամենամօտ մարդկանցից մէկն էր նրա կայ-
քերի ու կալուածքների կառաւարիշ՝ Ղահրըմանը:
Նա այնպէս էր սիրում իւր տիրոջը, այնպէս հետ
մտերիմ և սրտակից էր, որ շատ անգամ ընկերաբար
խորհուրդներ էր տալիս, միխթարում էր ու հարց-
նում նրա տիրութեան պատճառը: Խոսրով-Բէկն էլ
փոխադարձարար Ղահրըմանին էր շատ սիրում ու
հաւատում նրա անկեղծութեանը: Մի օր էլ, եթէ
դարձեալ այդու պատշզամում նստած երեկոյնան պա-
հոն Բէկը տիրուր մտածմունքների մէջ խորասու-

գուել էր, բարի Ղահրըմանը եկաւ նրա առաջ կանդ-
նեցաւ ու հարցըեց: —

— Բէկ, զու զիտես որ ես մեծ հոգս եմ անում
քո այդ տիրուր մտածմունքներիդ, ինչ պատճառ ու-
նիս տիրելու, ասա, մի պահիր, զուցէ քո սիրելի
Ղահրըմանը մի ճար կարողանայ անել:

— Ղահրըման, սիրելի բարեկամս, ես կասկած
չունեմ քո անկեղծութեան, զու շատ բարի ես, բայց
ինչ կարող ես ճար անել այն ցաւին, ինչ ցաւ որ
ընութեան ձեռքն է, Աստուծոյ տնօրինութեամբն է
սահմանուած: Ամենքը կարծում են որ աշխարհում ես
ամենաերջանիկ մարդկանցից մէկն եմ, այդ գուցէ
մասամբ ուզիր է: Ես միշտ զոհ եմ եղել Ստեղծողից,
կեանքիցս դանկատ չունիմ, բայց ինձ միծ ցաւ է
անում այն բանը, որ ես մօտենում եմ ծերութեան
շնմքին ու մինչև հիմա մի ժառանգ չունեմ որ նրա-
նով միխթարուիմ: Ճիշտ է շատ որբերի ու խեղճ ե-
րեխանների ես նայել եմ իմ ողղոց պէս, բայց հարա-
զատ որդի ունինալ, մի ժառանգ ունենալ, միշտ
ցանկացել եմ, որ իմ հայրենական օջախը վառ պա-
հի՛ ու իմ անունը յիշուի: Տէ որ զուն էլ ինձ բախ-
տակից ես, սիրելի Ղահրըման, զուն էլ ինձ պէս ան-
գաւակ ես, միթէ այդ բանը քեզ վիշտ չի պատճա-
ռում:

— Թանգագին-Բէկ, ես այդ մասին շատ եմ մտա-
ծել, շատ տիրել ու արտասուել եմ, բայց հնար չի
եղել ու երբ քեզ էլ տեսել եմ ինձ բախտակից, ես
քեզսնով եմ միխթարուել ու դադարել այդ մասին

հոգս անելուց: Մեր ժամանակն անցել է, այլ և ը պէտքէ մտածենք այդ բանի վրայ:

— Խոկ ես զեռ իմ յօյսը բոլորովին չեմ կտրել, ասաց Բէկը, ես կարծում եմ, որ եթէ շատ մտածենք մի հնար պիտի կարողանանք դտնել:

Խոսրով-Բէկը իւր կառավարչի հետ զրոյց անելով ճեմում էին պարտեզում ու խօսում այդ մասին: Նրանք վճռեցին ճետենալ օրը առաւտօտը վաղ, դուրս գալ քաղաքից հեռու, ման գալ ու հարցնել անցորդներին ու թափառական մարդկանցն այն յօյսով, որ մի խելացի մարդ կտրող է պատահել և մի ճար անել այդ բանին:

Միւս օրը վաղ, Դահլըմանը ճանապարհորդական շորեր հագած եկաւ սպասում էր բէկին, մինչև որ նա էլ պատրաստուեց ու միասին դուրս եկան:

Առաւտօտը նոր էր բացւում, բարի լուսը ճեղճրդում, աղօթարանը կամաց կամաց կարմրին էր տալիս ու աւետում աշխարհին արշալոյսն ու արեի ծագումը: Օգը խիստ թարմ էր ու զովարար. բէկը և իւր թիկնապահը ծառուղիներից, պարտէզներից անցնելով դուրս եկան ընդարձակ դաշտը: Ծաղիկների հոտը բռնել էր ամեն կողմ, թուշունների երդն ու խաղը, նրանց ճիշն ու տղաղակը, մեր ուղևորների ու Ճը գրաւեցին: Նրանք էլ մի ըոսէ մոռացան իրենց դադառուկը ու կամեցան մասնակցել իրանց ուրախութեանը: Դետի ափը համեստ լուացուեցին ու երկուները աղօթարան դարձնելով իրենք էլ աղօթել ուկսեցին ու իրենց ձայնը միացնելով անմեղ թըռչ-

նիկների ու թիթեռնիկների հետ, փառաբանեցին բնութեան ամեն հրաշալիքների պատճառ եղողին, Ստեղծող Սրարչին: Եյսօր նրանց աղօթքը ամենից աւելի սրտաշարժ էր, ամենիրից աւելի զբացուած: Դեռ նոր էին վերջացրել աղօթքը և վեր կացել շոքած տեղերից, մէկ էլ բէկին ու իւր ընկերը տեսան որ իրենց մօտից անցնում է մի բարձրահասակ, նիհար զեմքով ու վտիտ երեսով մի մարդ: Դա մի կրօնաւոր էր, մի ճգնաւոր, ապրում էր անապատում ու երբեմն շրջելով ժողովրդի մէջ, քարոզում էր մեծ մարդարէների խօսքերն ու պատգամները: Խոսրով-Բէկը երբ տեսաւ նրան խոկոյն մօտեցաւ ու պատմեց իւր սրտի վիշտը.

— Սիրելի հայր, մեզ մի օգնութիւն արա, մեր երկուսի յաւելին մի ճար քեզանից ենք սպասում. դու Աստուծոյ մարդ ես, պէտքէ որ նրա խորհուդները քեզ յայտնի լինեն:

— Ես պատրաստ եմ անելու ձեզ ամեն բան, ինչ որ կարող եմ, պատռական բարեկամներ, բայց ես հաւատացած եմ որ, եթէ մարդ ուղիղ սրտով մի բան խնդրում է նախախնամողից, անպատճառ ստանում է իւր խնդրածի: Ես հեռուից տեսայ թէ զուք երկուսդ էլ ինչպէս ջերմեռանդ աղօթում էիք, ինչ էլ որ խնդրեցիք, ձեր խնդիրը կը կատարուի, ճգնաւորը աւելացրեց, ես էլ ձեզ հետ կաղօթեմ ու կը խնդրեմ Սրարչից որ նա ձեր վափադը կատարի ու երկուսիդ էլ մի մի դաւակ պարզեէ. միայն զուք վաղը նորից դուրս արիք այստեղ եօթը ոչխար մատաղ արէք, ցըռուե-

ցէք աղքատներին ու մէկդ գետի մի կողմը, մէկդ միւս կողմը սպասուցիք: Այդ ժամանակ գետի հոսանքի հետ խաղալով կը դայ մի գեղեցիկ նոռու, այդ նոռուը վեր կառնէք երկուսով կը վայելէք, կէսը մէկդ, կէսը միւսդ, դա կը լինի նշան այն բանին, որ դուք ձեր նպատակներին կը համնէք:

Հետեւեալ առաւօտեան Խոսքով-Բէկին ու իւր կառավարիչը դուքս եկան, հօթը ոչխար մատադ կտրեցին, յըսւեցին աղքատներին ու ջերմեռանդ սրտով սպասում էին ճգնաւորի խոստացած նոռանը: Մէկ էլ յանկարծ տեսան որ ահա զրի հոսանքի հետ խաղալով ցած է դալիս մի գեղեցիկ կարմիր նոռու: Վ. դայ պրծան բռնեցին ու ափ գալով ճգնաւորի պատուէրի համաձայն երկու կէս արին ու տուն գալնալով իրենց ամուսինների հետ անուշ արին այդ խորհրդաւոր քաղցրահամ նոռուը: Խոկ որ խորհրդաւոր էր այդ նոռուը, նրա մեծ-մեծ հատիկները այնպիսի լաւ աղդեցութիւն ունեցան նրանց վրայ, ինչպէս հմուտ բժշկի պատրաստած գեղահատիկները: Մի տեսակ երիտասարդական ոյժ ու եռունութիւն եկաւ հասակաւոր այդ ամուսինների վրայ ու նրանք զգացին արեան եռում ու աշխոյժ: Զօրեղ ու քաղցը զինի խմողի նման մի տեսակ արբեցին Բէկը և նրա կառաւարիչը իրենց ամուսիններով ու պարկեցին հանգստանալու...

Անցաւ այդ օրուանից մի տասն ամսի չափ գթառատ ու բարերար Աստուածը ցոյց տուեց իւր նորհը Բէկին ու նրա կառավարչին: Մի գեղեցիկ օր

Խոսքով-Բէկի կինն էլ, Ղահրըմանի կինն էլ մի ժամանակ մի մի փափլիկ ու կայտառ զաւակ պարզեցին իրենց ամուսիններին:

Բէկի կինը աղջիկ ծնեց, Ղահրըմանինը - տղայ: Այնպիսի մեծ ուրախութիւն տիրեց այդ երկու ընտանիքների մէջ, որ նկարագրելու բան չէ: Երկու ընտանիքն էլ աւելի ես սկսեցին բարի գործեր անել. աղքատներին ողորմանալ, կոյրերին, ցաւագալներին սփոփել, մերկ ու տնանկներին հազցնել ու մխիթարել: Պարտապաններին իրենց պարտքերը բաշխեցին, բարեգործութեան համար նորանոր կարգագրութիւններ արին, մի խոսքով ամբողջ գաւառին յայտնի դարձրին իրենց ուրախութիւնը: Մի օր էլ քաղաքի մեծամեծների համար ճոխ սեղան էր պատրաստուել Խոսքով-Բէկի պատուէրով, որ ամեն մարդ էլ իւր ուրախութեանը մասնակից լինի: Արդէն սեղանը շրջապատել էին բազմաթիւ հիւրեր և պատրաստում էին սկսել ճաշը, երբ տեսան որ սենեակ մտաւ մի անձանօթ մարդ, խորհրդաւոր զէմքով ու հանդերձներով: Հասկանալով որ գալովը հասարակ մարդ չէ, բոլոր հանդիսականները ոտի կանգնեցին ու ողջունեցին նորեկի գալուստը: Օտարականն այն ճգնաւորն էր, որ Խոսքով-Բէկին ու Ղահրըմանին պատահել էր գետի ափում և խոստացել էր դալ իրանց մօտ, երբ տղայաբերութիւն լինի: Ճգնաւորը ուղեց նորածին երեխաններին, մէկ-մէկ առաւ գիրկը, անոն զրեց նըրանց ու ասաւ.

—Թող տղայի անունը Ասման կոչուի, խոկ աղջը-

կանը Զէյջանի: Եւ ովովհետև սրանց ծնունդը խորհրդաւոր եղաւ, արիք այնպէս արէք, որ եթէ նրանք Սստուծով միծանան ու իրենց արրունքին հասնեն, միմեանց հետ ամուսնացնէք. այս թող լինի իմ պատուէը ձեզ. ով որ արդելք լինի այս գործին նա կանիծուի: Բէկից ու Ղաճըմանից խօսք առաւ որ անպատճառ կատարեն իւր պատուէը ու ինքը հեռացաւ, անհերեոյթացաւ,

Օքեր անցան: Նորամանուկները մեծանում ու զարգանում էին ու դալար ծառի ճիւղերի նման ծաղկում ու բարգաւաճում: Երբ ութը տարեկան դարձան ծնողները նրանց տուին ուսումնարան, որ ֆիդիքական զարդացման հետ զարդանայ և նրանց մտաւոր աշխարհը: Թէ Սսմանը թէ Զէյջանը այնպէս յառաջադիմութիւն ցոյց տուին գպրոցում, որ փարժապետների ուշազբութիւնը զրաւեցին իրենց ու ընկերների բարի նախանձը շարժեցին: Վարք ու բարքով այնպէս քաղցր, այնպէս գուրեկան էին, որ ամենքն էլ սիրում ու պաշտում էին նրանց: Կեանքի ամենաերջանիկ ժամանակն էր որ անցկացնում էին նրանք, մանկութիւնը բաղցը բան է, առաւել սիրոյ և գուրզուրանքի մէջ, ծնողների հոգատարութեան տակ, ապահով և ուրախ: Սսմանն ու Զէյջանը վարժարանից միասին էին տուն վերադառնում ու միասին դուրս ելնում

ման գալու: Անցան այս շրջանի ամիսներն ու տարիները, նրանք մտան պատանեկութեան շրջանի մէջ. մօտեցան այն հասակին, որ բնութեան գաղտնիքը մարդու աչքերի առաջ բացւում է: Թէ ինչ է այլ մարդը և կինը, նրանք հասկացան: Սսմանը Զէյջանին հայել սկսեց բոլորովին ուրիշ հայեացըով ու երեխայտկան խաղերն ու անմեղ զուարձութիւնները փոխուեցին սիրային խօսակցութիւնների ու չարաճընիութիւնների: Մի խօսքով բնութեան տեսարանի վարագոյը բացուեց նրանց առաջ և համեստութեան կնիքը նրանց երեսներից կամաց-կամաց սկսեց վերանալ: Թէ մէկի և թէ միւսի մէջ արխնները ևո էին դալիս, երբ միմեանց աչքերի մէջ էին նայում: Հատւաւ էլ հասունացել էին, արդէն մտել երիտասարդական հասակի մէջ, տանձի նման հասել էին, խնձորի նման կարմրել: Նրանց մէջ զրուեց հաստատուն սիրոյ հիմքը ու աւելի բոլիչորուել սկսուեց, երբ մի իերալ լսեցին որ իրենք մէկ մէկու համար են արդէն և այդ բանը սահմանուած է դիու ծնուելու ժամանակից: Սպասում էին այն օրուան, թէ երբ պէտք է ծնողները պատկեն իրենց ու փափակներին հասցնեն: Եւ անգիտութիւն, անաստուածութիւն էր այդ երկուսին միմեանցից բաժանելը, զրանք իսկ որ իրար համար ստեղծուած էին: Սսմանը Զէյջանից գեղեցիկ ու սիրուն, Զէյջանը Սսմանից չքնազ ու հիանալի: Դրանց տեսնողը չէր ուզում աչքերը հեռացնել նրանց լուս երեսից, այնքան գուրեկան, այնքան զըաւիչ ու անուշ էին նրանք: Ամպոտ, մոայլ ու աշնանային

օրերին, եթէ արև չը կար, այդ ոչինչ, Զէջանի և
ըստ արևի պէս փայլուն ու կրակոտ էր: Մութ խա-
ւար զիշերներին եթէ լուսին ու աստղ չը կար, այդ
ոչինչ, Ասմանը պակաս չէր լուսնից ու աստղից, Նը-
րանց պէս փայլում էր, Նըրանց պէս պսպղում: Սո-
խակը երբ լուսմ էր օրիսրդ Զէջանի ձայնը, ամօ-
թից գաղար էր տալիս իւր երգին ու ականջ դնում,
որ Նըրանից սովորի գայլայլ ու գեղգեղալ: Արծիւր,
երբ նայում էր Ասմանի աշքերին, Նըրա սըրատես, վառ-
վառուն հայեացքից քոռ-բու էր գառնում, գլորւում
ցած: Կարապը այգու ճողում լողալիս, երբ տեսնում էր
աւազանի մէջ լողացող Զէջանի ձիւնի պէս սպիտակ
մարմինը, վշտից ու նախանձից երգում էր: Եղնիկը
աղերսում, խնդրում էր Ասմանին, ոտներովը լմկնում,
որ նա իրեն ճարպիկ քայլել ու վագել սովորացնի:
Իսկ երբ Ասմանն ու Զէջանը միմեանց ձեռք բռնած
ճեմում էին պարտեզում ու անցնում ծառուղիներով՝
վարդը, շուշանը, մանիշակն ու նունուֆարը թփերի
տակ պահում էին, որ իրենց տգեղութեան վրայ չը
ծաղքեն այդ հրաշալիքները: Մի խօսքով նկարսդը
լու բաներ չէին նըրանք, պէտք էր միայն տեսնել ու
զարմանալ բնութեան այդքան աննման ու անպատ-
մելի ստեղծագործութիւննրի վրայ:

Ասմանի հայրը՝ Ղահրըմանը խելացի և բարի
մարդ էր, նա տեսաւ որ արդէն հասել են իւր տղան

ու նըրա համար նշանակուած աղջիկը. ուզեց բէկի
մօտ այդ մասին խօսք բաց անել: Եկաւ մի երեկոյ
ուրախ արամաղրութեամբ, մտաւ բէկի սենեակը:
Խոսրով-Բէկը կարծից թէ Ղահրըման իւր կառավար-
չական դուժերով է եկել, հրաւիրեց նստելու և խօ-
սելու:

— Թանկաղին տէր, ասաց նա, այս ժամին իմ
քեզ մօտ գալուս պատճառը հետեւալն է, Եկայ յիշեց-
նելու քեզ տասնեեօթն տարի առաջ ունեցած մեր
զրութիւնը, մեր Զէջանի և Ասմանի ծնունդները և
ճկնաւորի պատուէրը: Հիմա նըրանք մեծացել են, ա-
մումնանալու ժամանակներին հասել. մենք էլ քանի
դնում ծերանում ենք. արի նըրանց միմեանց հետ
սպակենք, հարսանիք անենք, ուրախանանք ու նըրանց
էլ ուրախացնենք, վափագներին հասցնենք:

— Հա, լաւ ես ասում. ես բան չունիմ ասելու,
միայն թէ պէտքէ տիկնոջը հարցնեմ ու քեզ կը պա-
տասխանեմ:

Խոսրով-Բէկը ոչ շար մարդ էր, ոչ էլ յիմար.
միայն նըրա կարծիքով աղջկայ իրաւունքը աւելի մօրն
է պատկանում, բան թէ իրան. զրա համար էլ ա-
ռանց ամուսնու համաձայնութեան խօսք չտուեց
Ղահրըմանին: Բէկը դնոց մօտը և ասաց.

— Միրելի տիկին, մեր կառաւարիշը այսօր եկաւ
ինձ մօտ ու մեր աղջիկը իւր որդու համար ուզեց.
ինչ ես ասում, մայր ես, զուն աւելի իրաւունք ու-
նիս այս գործի մէջ, ասա՞ քո խօսքը:

— Բէկ, ես սպասում էի որ այդ առաջարկութիւ-

Նը պիտի լինի Ղահըրմանի կողմից, բայց իզուր, այդ լինելու բան չէ, մենք աշխատենք մեր գուստը մեղանից աւելի բարձր մարդու տանք, ոչ թէ մեր կառաւարչի որդուն, որ ոչ իշխանական ծագում ունի, ոչ էլ մեզ շափ հարստութիւն, ես ասում եմ որ այդ բանը լինելու բան չէ, և էլ չեմ ուզում:

— Տիկին, լաւ մտածիր, ասաց Խոսրով-Բէկը, դու քանդում ես ընութիւնից տնօրինուած կարգադրութիւնը, մենք պարտաւոր ենք այդ բանն անելու, որովհետեւ ես ու Ղահըրմանը խօսք ենք տուել մեզ բարիք հասցնող ճգնաւորին, որ այդ տղան ու աղջիկը միմնանց հետ ամուսնացնենք:

— Գրանք դատարկ բաներ են, Բէկ, ինչ որ ասում ես, պատասխանեց տիկինը, անցած գնացած բաների համար ովզ է քեզանից հաշիւ պահանջում, ասա չեմ տալ, վերջացաւ զնաց: Դու զիտես որ բէկիրի, փաշաների ու խաների որդիներն աղաչում, պազատում են իմ Զէջանին տանելու, ես ինչպէս նրան տամ, մեր վողով առաջ եկած ու մեր դռանը ծառայողի որդուն:

— Դու զիտես տիկին, մեղքը քո վիզը. թէ որ դուն չես ուզում, ես էլ չեմ ուզենայ:

Այս ասելով Խոսրով-Բէկը դուրս եկաւ կնոջ մօտից ու իրենց որոշումը յայտնեց Ղահըրմանին, որ այդ բանը լինելու բան չէ, և ոչ մի խօսք այլ ես պիտի չը լինի այդ մասին:

Հետեւալ օրուանից Բէկի կինը իւր աղջկան այլ ես շուղարկեց ուսումնարան և սաստեց, որ հեռու

մնայ կառավարչի որդուց՝ Ասմանից: Այս տիսուր լուրը հասաւ Ասմանին, նա սկսեց սպալ ու ողբալ գիտէր որ ոյժով չէր կարող բան շինել, եթէ կամաւոր գլուխ չը դար այդ բանը: Խեղճ տղան այնքան վշտացաւ, այնքան լաց եղաւ, որ մի քանի օրուայ մէջ կատարեալ մաշուեց: Նա տանջուում էր, տեսնելով որ արցենքը միւայն այն է, որ իրենք էլ բէկի շափ հարուստ չեն ու ազնուական չեն: Խելացի տղայ էր, նա գին չէր տալիս ոչ հարստութեան, ոչ էլ ազնուականութեան, բայց ինչ անէր որ միւաները ուրիշ կերպ էին մտածում: Հայրը տեսնելով որդու որդութիւնը, նրա ցաւն ու հաւաչանքը, վճռեց ինչ էլ որ լինի մի անգամ էլ գնայ Բէկի մօտ այդ մասին խընդ-ընու:

— Պայծառափայլ Բէկ, իմ տէրս և թանգագին բարեկամս, խղճա մեզ, խղճա իմ մինուճար որդու կեանքին ու արեին, չորհ արա օրիորդ Զէջանին տալ իմ Ասմանին:

— Ղահըրման, ես քեզ շատ եմ սիրել—ասաց Բէկը, ամեն խնդիրդ կատարել եմ, միւայն ես էլ մի խնդիր ունեմ քեզանից, այն է որ միւս անգամ այդ խօսքը չը կրկնես, մենք այդ հարցը վազուց փակել ենք արգէն:

— Խոսրով-Բէկ, դու պարտական ես այդ բանն անելու, ես պահանջում եմ... վրդովուած ասաց Ղահըրմանը:

— Զայնդ կտրիր, Ղահըրման, եթէ չես ուզում որ այս գաշոյնս կուրծքդ խըհիմ, դու ինձ ճանաշում ես:

— Ես զաշոյնից չեմ վախևնում Բէկ, դիմակը եց կառավարիչը. այլ վախենում եմ այն պատուհասից որ մեր դլիսն է գալու մեր ուխտը ու պայմանը դժբելու պատճառով. Մենք քանդեցինք մեր երդումը. մեղքը քո վիզը, ես դնում եմ:

Այդ օրուանից Խոսրով-Բէկը արձակեց իւր կառավարչին ու Ղաճարմանը իւր բոլոր կապերը կտրեց նրա հետ. Տուն զառնալով նա յայտնեց որդուն Բէկի կատաղութիւնը և վեջնական մերժումը. Մի վհաջոր որդիս, ասաց նա, Սստուած ինչ որ տհօրինել է, այնպէս էլ կը լինի: Սսմանը բարկութիւնից տրաքում էր, չը գիտէր ինչպէս մեղմացնի իւր յուզմունքը:

Տիսնում էր որ ինքը ամեն ինչով արժան է Զէջանին. զարգացած է, գեղեցիկ է, երխտասարդ է, առողջ է, վերջապէս անշափ սիրով սիրում են միմեանց, բայց որովհետև հարուստ չէ և հասարակ ծագում ունի, դրա համար էլ արգելում են իրեն տիրանալու իր սիրած աղջկան. Այլ ևս նա տանը չէր մնում, թափառում էր դէս ու դէն, ընկերը կորցրած տատրակի տէս մէկ անտառներն էր մտնում, մէկ դաշտ դուրս գալիս, մէկ քաղաքի փողոցներով անց ու դարձ անում, թէ ինչ է մի տեղ պատահի իւր հոգուկտոր Զէջանին. բայց անդութ Զէջանը ոչ մի տեղ չէր երեսում: Մի օր էլ այդպէս աննպատակ ման գալիս, շատ դէս ու դէն ընկաւ, ինքն էլ չը գիտէր ուր էր զնում, մինչև որ քաղաքից դուրս գալով եկաւ մտաւ մի հորի մէջ. Այդտեղ կային հին ժամանակուանից մնացած գերեզմաններ, կիսաքանդ

վահքեր, մատուռներ ու այլ աւերակների մնացորդներ: Կար զանազան ծառերով ու գոյնզգոյն հոտաւէտ ծաղիկներով լի մի սիրուն հովիտ, որտեղ խոխոչալով վագում էր մի պարզ ու վճիտ առուակ: Սսմանը մօտեցաւ, այրուող երեսն ու ձեռքերը տուակի սառ ջրով լուաց, մի կուշտ էլ խմեց, բորբոքուած սիրալ հովացրեց ու ձեռքերը դէպի երկինք բարձրացնելով սկսեց ազօթել, նա ասում էր.—

«Ճէր Աստուած, ինչո՞ւ համար ինձ ստեղծեցիր, որ նախանձ թշնամու աշքին ծաղրի առարկայ գառնամ, իոշո՞ւ համար տուիր ինձ այս ոյժը, վայելուշ հասակը, խելքն ու չնորհքը, քանի որ ոչնչի պէտք չեն գալու ու խոնարհուելու են փողի առաջ: Ինչո՞ւ արծարծեցիր սրտիս մէջ սիրոյ անհանգչելի կրակը, երբ որ չը պիտի ճաշակեմ նրա քաղցը պատուղը: Ինչո՞ւ համար չես վերջացնում այն թիւնաւոր օձը, որ երկու սիրող սրտեր բաժանում է իրարուց, երեսանկեալ աղաչում եմ, Տէր, կամ իմ սիրելուս հասցրուինձ, կամ մահ տուը խեղճ Սսմանին, որ տղատուի այս այրող ու տանջող կրակից»: Աղօթքը վերջացնելուց յետոյ նա քաշուեց առանձնացաւ մի մեծ ծառի հովանու տակ փափուկ խոտի վրայ թեկն տուեց, վերարկուն հանեց դրեց զլիսի տակը ու այդ տիսուր տրամադրութեան տակ քնեց խեղճ տղան:

Մարդ ինչ մտածմունքներով որ քոն անմի, անմոտեց էլ երազը կը դայ. Զէջանի մասին մտածող ու տանջուող Սսմանը երազում ում պիտի տեսնէր, ինարին իւր կեանքին ու արեին, Զէջանին: Ահա նազեկի օրեւ

որդ Զէջանը քառասուն աննման կոյսերով շրջապատուած, մէկ ձեռքում գեղեցիկ ծաղկի փունչ, միւս ձեռքում մի ոսկեայ գաւաթ, անմահական գինով լեցուն, մի վառաւոր, ալեծածան ծերունու առաջնորդութեամբ գալիս է զէպի իրան: Ասմանը քիչ է մասում ուրախութիւնից խելքը թուցնի, ոտքի է կանգնում ու ողջունում այդ գեղահրաշ խմբին: Ծերունին մօտ է գալիս Ասմանին, բարեսում է ու իւր վերաբեկուի տակից մի ոսկեթել գեղեցիկ սազ հանելով տալիս է նրան: «Տէք իմ, ես սազ ածել չը գիտեմ», ասում է Ասմանը: Ծերունին Զէջանի ձեռքից ոսկէ գաւաթը առնելով ուղղում է զէպի իրեն ու հրամայում որ խմի: Ասմանը խմում է: «Դէհ, հիմա ածիր, ասում է ծերունին, այս գինին ով որ խմէ համ երաժիշտ է, համ բանաստեղծ: Այս էլ քո Զէջանն է, լաւ նայիր երեսին, դու սրանն ես, սա քոնք, դատարկ բան է ինչքան էլ որ աշխատեն քեզ բաժանել, վերջը դարձեալ միացած էք, միայն թէ շատ նեղութիւնների ու տանջանքներու պիտի հանդիպիք» Այս խօսքերը ասելուց յիտոյ ծերունին էլ, կոյսերի խումբն էլ անյայտանում են: Ասմանը զարթնում է ու հասկանում, որ իւր տեսած ու լսած երազ էր: (Ասում են որ այդ գիշերը նոյն ծերունին յայտնուեց և Զէջանին երազում, նրան էլ գինի խմացը Ասմանի ձեռքից ու նոյն խօսքերը ասելով աներեսովթացաւ:) Ասմանը տեղից վեր կացաւ ու կամաց կամաց քայլերն ուղղեց զէպի տուն: Հասնելով մտաւ իւր առանձնասենեակը, հիւանդի պէս պարկեց ու սկսեց զէլը տար:

Ծնողները իրենց մինունար ու փայփայած որդուն այդ դրութեան մէջ տեսնելով սաստիկ տխրեցին, իրենց զլխին, ծնկներին խփեցին վախենալով թէ մի գուցէ իրենց որդին խելագարուի այդ աղջկայ պատճառով: Հարունակ անիծում էին բէկի կնոջը, որ ամեն բան փնացրեց ու պատճառ դարձաւ այդ դրութեանը:

Ասմանը ծնողների դրութիւնը տեսնելով մի խորը ախ քաշեց, որ իրա պատճառով նրանք տանջւում են: Մի սազ խնդրեց, բերին տուին իրան: Նա վարժ կերպով լարեց սազը, մի – երկու քաղցը մեղեղի ածեց ու յետոյ իւր երազը ծնողներին սկսեց երգով պատճել:

Նս մի ցաւ իմացող լաւ բժիշկ կուզեմ,
Որ գայ լմ վէրքերս բանայ, ինչ կասէք,
Դէսի սիրոյ ծովը արագ կը վազեմ,
Գարնան հեղեղի պէս երայ, ինչ կասէք:

Հանդիպեցի մուսաներու խնջորքին,
Սրտիս եղած իղձը ինձ հասկացըին,
Ինձ ոսկի գաւաթով մէկ գինի տուին,
Նոր հոգի նոր կեանք առայ, ինչ կասէք:

Երր գինին խմեցի, շատ բան զգացի,
Աշուղ եղայ, ինձանից երգ ասացի,
Սիրահարի տանջանքները կարգացի,
Սիրոյ գերքը ինձ մօտ տեսայ, ինչ կասէք:

Ինչու հանդիպեցիր, խղճակի Ասման,
Սրտիս մէջ լոյս ծագեց մի լոյս գերբնական

Աշքաւ առջև բացուեցաւ մի տեսաբան,
Տիրոջ փառքին ես գալմացայ, ինչ կառէք:

Ընթերցնե, արի մի քիչ էլ աղջկայ կողմը զը-
նանք, տեսնենք, ինչ է անում այն անմեղ ու անարատ
աղամին: Նա տեսնելով, որ Ասմանը վիզը ծուռ, ձեռ-
քերը ծոցը դրած, խեղճ մոլոր ման է գալիս իրենց
տան շուրջը, ինչպէս որ թիթեսը կրակի շուրջը, չը
կարողացաւ իրան զսպել: Ցաւից ու խղճահարութիւ-
նից սկսեց հեկեկալ, ուր իւր մետաքսանման հիւսե-
րից մինը սազի տեղ փափիկ կրծքի վրայ բռնելով
այս երգը երգեց տիսրալի ձայնով —

Հայրս, արդեօք վիտես սրտիս ցաւը դու,
Սիրոյ հեղինակին դուայ այս գիշեր,
Մուսաները ինձ կանչեցին, մեր հասու,
Նրանց խնջորքի մէջ մտայ այս գիշեր:

Խնդրում եմ, ողորմած հայրու քեզանից,
Վախեցիր Աստուծոյ սուրբ գատառանից,
Իմ սիրածս մի բաժանիր ինձանից,
Նրազիս մէջ նրան տեսայ այս գիշեր:

Քեզ օգուտ չի բերիլ դառն տանջանքս,
Մինչ երկինք է հասնում իմ հառաջանքս,
Նրախս սիրածինն է իմ բոլոր կեանքս,
Հասորում փափազիս հասայ այս գիշեր:

Ասլրիս, իշխան հայրս, դու երկար ապրիս,
Ինչ զրուած է, կուզայ իմ անբախտ գլուխս

Զեյջանն եմ, սիրոյ կայծ դիպաւ իմ սրտիս,
Թիթեսի պէս ես վառուեցայ այս գիշեր:

Հայրը հասկանալով, որ աղջկայ խօսքերը Ասմա-
նին են վերաբերում, ու այդ տղան եկել է դարձեալ
իրենց տան շրջականները ման է գալիս, սաստիկ
բարկացաւ ու հրամայեց որ, ով որ կարող է թող
այդ անզգամին սովանէ, խոստանալով իւր աղջիկը
տալ սպանողին կնութեան:

Անցել էին զարնանային դով ամիսները, ամառ
էր, սկսել էին չողերը: Խոսրով-Բէկը իւր նոր կառա-
վարչի հետ ամբողջ ընտանիքով զնաց ամառանոց:
Գնալու օքը Ասմանը եկաւ ճանապարհի վրայ կանգ-
նեց, շորերը փոխել էր, նրան ոչ ոք չը ճանաշեց:
Ճանաշեց միայն Զէյջանը, որ սիրոյ կրակով վառված
սպասում էր, որ Ասմանին պիտի հանգիպի: Նա ուզեց
մի նշան թողնել իւր սիրելու մօտ, բայց չը գիտէր
ինչ կերպ հասցնէր նրան, որ ծնողները նրան չը նկա-
տեն այդ բանը: Ծտապով մի քանի տող նամակ գրեց,
մատից մի թանկագին մատանի հանեց ու ծածուկ
յանձնեց իւր ծծմօրը ու խնդրեց որ մի կերպ իւր
սիրելուն հասցնէ: Դայեակը մի պատճառ գտաւ, մի
քիչ յետ միաց ճանապարհից ու իւր մանկահասակ
խանումի տուած աւանդը հասցրեց Ասմանին: Ասմա-
նը յափշտակութեամբ իւլեց նամակը և մատանին

չնորհակալ լինելով բարի կնոջից։ Նամակի մէջ գրած
էր հետեւալը — «Թանկաղին Սսման, իմ հոգուս հա-
տուը, իմ օր ու արեց Սսման, մենք զնում ենք ա-
մառանց, ես գնում եմ, բայց հոգիս չի գնում, սիրոս
ու խելքս քեզ հետ է, առանց քեզ ինձ համար աշ-
խարհը խաւար է, կեանքը դառնութիւն է, ամառա-
նոցը դժոխք, ինչպէս որ մարդս առանց հոգի չի ապ-
րիլ, այնպէս էլ ես առանց քեզ կեանք չունիմ, որով-
հետև իմ հոգին դուն ես, երբէք ինձ չը մոռանաս,
ոչ մի վայրկեան։ Քու Զէջանդ»։ Նամակը ծալեց,
համբուրեց, դրեց ծոցը, մատանին մատը դրեց ու
վերադարձաւ տուն։ Իւր սիրելի սազը ձեռքը առնե-
լով, սիրոյ կըսկով այրուած, սիրտը խորտակուած,
արտատուալի աշքերով հետեւալ տիրադին երգն ա-
սաւ իւր հօրն ու մօրը —

Լաւ ըմբռնէ խնդրեմ խօսքերուս միտքը,
Հոգիս, հայրիկ, հրաման առնելու եկայ,
Տեսնենք ուր կը տանի ինձ սիրոյ հետքը,
Հոգիս, հայրիկ, հրաման առնելու եկայ

Զէջանն անցաւ ես չը բոնեցի բարե,
Թող դայ մայրս, որ ինձ տուել է արե,
Այսօր ճիւր եմ իմ տանս մէջ, արդարե,
Հոգիս, հայրիկ, հրաման առնելու եկայ,

Խղճուկ մայրիկ, իգուր դու լաց մի լինի,
Քեզ ողբալը, սպալը չէ արժանի,
Ես ճամբորդ եմ, դու ինձ ճամբուց մի հանի,
Հոգիս, հայրիկ, հրաման առնելու եկայ։

Ես կարօտ եմ օգնութեանդ, գգուանքիդ,
Ինձ համար մաշելես կէսը քու կեանքիդ,
Չեմ կարող դիմանալ քու աղաչանքիդ,
Հոգիս, հայրիկ, հրաման առնելու եկայ։

Այդ օրը հազիւ կարողացան պահել Ասմանին։
հետեւալ օրը վաղ նա շուրեց փոխեց, պատրաս-
տուեց, իւր նժոյդ ձին թամքից՝ թռաւ վրան, սազն
էլ թամքիցը քաշ արեց, մի հազարի չափ ոսկի հետը
վերցրեց, հօր ու մօր ձեռքերը համբուրեց ու ընկաւ
ճանապարհ։ Ուր գնալը զիտէր, պէտք է ուղեսորուէր
դէպի խոսրով-ինչի սեփական ամառանոցը, որ ամեն
ամառ գնում էր։ Մինչև որ Սսմանը ճանապարհը կը
շարունակէր, Զէջանի սիրտը այնտեղ, ամարանոցում
կտոր-կտոր էր լինում իւր սիրելու համար, մտածում
էր թէ ինչ պիտի լինի նրա վիճակը առանց իրեն։
Խեղճ աղջիկը դարձեալ իւր տեսած նշանաւոր երազն
էր յիշում ու մխիթարուում նրանով։ Միրահարութիւնն
էլ խօ մարդուն դարձնում է աշուղ, նուտղելն ու եր-
գելը լինում է սովորական։ Ահա Զէջանը ձեռքն ա-
ռաւ իւր սազաֆներով զարդարուած շունդուրը (շատ
փոքրիկ սազ) ու սկսեց երգել։

Երեկ գիշեր ես մի նոր երազ տեսայ,
Բացուեց աշքիս առաջ մի հարթ ճանապարհ,
Այդ տեղից գնալով մի այգի մտայ,
Այգի չէր, դրախտ էր, մի մեծ խնջոյք կար։

Անթառամ ծաղիկներ, երբներանդ բոյսեր,
Գրանք մարդ էին, թէ երկնային լոյսեր,

Քառասուն նորադի գեղանի կպյանը,
Երդում, խաղում էին, բռնել էին պար:

Մէկ գինով լի բաժակ իմ ձեռքս տուին,
Խմեցի, մի տեսակ հիւթ էր երկնալին,
Դրանք, քառասունն էլ աէր կը երգէին,
Ամեն մէկը ունէր մի ոսկի քնար:

Ինձ համար կաղմեցին մի պարահանդէս,
Մէկ-մէկ նուադեցին, պարեցին կէս-կէս,
Թռան, անհետացան երգելով այսպէս—
«Զէջանը Ասմանի ծաղիկն է դալար»:

Թող այստեղ Զէջանը երգէ, նուագէ ու միսի-թարուի մենք գնանք տեսնենք, ուր մնաց անմիթար Ասմանը. նա հասաւ Խոսրով-Բէկի ամարանոցի մօտե-ը, ձիուց ցած իշաւ ու սանձը բռնած կամաց-կա-մաց գնում էր, նա մտածեց, եթէ այսպէս գնամ բէ-կի տունը, ինձ չեն ընդունի, զուցէ և անպատուեն, կամ բռնեն. աւելի լաւ է մի ուրիշ հնար մտածել: Նա անցաւ զէմի բլուրի յետել, որտեղ հովիները արածացնում էին իրենց հօտերը: Նա մօտ կանչեց նրանցից մէկին, իւր թանկագին շորերը տուեց նրան ու ինքը հաղաւ հովուի շորերը, ձին էլ պահ տուեց ու սազը առնելով քայլերն ուղղեց զէպի Խոսրով-Բէկի ամառանոցը:

Օրը պայծառ ու գեղեցիկ էր, երկնքի երեսին գեղի համար մի ամպի կտոր էլ չէր երեսում. Մարդ, գազան, թռչուն ամենքը կենդանութեան ու շարժ-ման մէջ էին: Դաշտալին աշխատանքների եռուն ժա-

մանակն էր, միայն ամառանոց գալող մեծատուններն ու իշխաններն էին հանգիստ վայելում իրենց գեղե-ցիկ ու զով բնակարաններում: Ասմանը երբ մօտե-ցաւ Խոսրով-Բէկի բնակարանին, տեսաւ որ Բէկը իւր կառավարչի հետ պարտեզում գետակի մօտ նստած սուրճ են խմում: Ուզեցաւ աղեղից արձակած նետի պէս շուտով անցկննալ նրանց առաջից, բայց Բէկը նկատեց ու կանչեց իւր մօտ:

— Ո՞վ ես, ինչ մարդ ես. երեխ հովիւ ես, կամ թափառական աշուղ. սազ ունես, ածել գիտես, արի մի բան ածեր լսենք:

— «Գլխիս վըայ աղա, խեղճ մարդ ենք, սար ու ձոր, գեղ ու բաղաք, քոլ ու քար ման գալող թա-փառական աշուղ. մեր գործն է սէր երգել, ալպառաժ քար սրտերը փափկացնել, գութ, աղելսանք խնդրել» Սազը լարեց ու ակսեց երգել,

Ես մի գեղատեսիլ սրտակից գտայ,
Շողովում է լոյսի նման սիրածս,
Պատկերը տեսնելու չեմ արժանանա,
Տանջւում է ինձնից բաժան սիրածս:

Աղեց բաշ է արել ակէ մանեակը,
Հալեց սրտիս եղը սիրոյ կրակը,
Փնտրելով, մնարելով գտայ սենեակը,
Նստեր կուլու անօդնական սիրածս:

Կարօս եմ խօսելուն և քաղցր լեզուին,
Սոլիակ դառնայի նոր ծաղկած վարդին,

Գոտլիկի պէս փաթաթուէի իւր մէջըն,
Ինձ անէր այդ փառքին արժան սիրածա:

Իւր սիրելու այստեղ դալը իմանար,
Խօսէր ուրախ զուարթ իմ սիրտս բանար,
Թէ փորձուած լինէր մի բան հասկանար,
Տէր ցոյց տա ինձ խիստ դադաստան սիրածա:

Երգը վերջացնելուց յետոյ Բէկին ասաց՝ «ապրիս,
ապրիս աշուղ եղբայր, լաւ ես ածում, լաւ էլ եր-
գում: Նստիր մեղ մօտ մի սուրճ խմիր ասելով, նա
հրամայեց որ սուրճ բերեն հիւրին: Այդ ժամանակ
կառաւարիչը Բէկի ականջին վսփսաց ասելով՝ «Բէկ,
այս աշուղը լաւ բանաստեղծ է երեսում, լաւ էլ երա-
ժիշտ. մեր Զէջան խանումը քանի օր է, որ բոլորո-
վին անմիտար է ու տիսուր տրտում նստած իւր
սենեակում, արի սրան տանենք նրա մօտ, թող երգի,
ուրախացնի: Ցենք ասիլ թէ նա Բէկի աղջիկ է, կա-
սենք մեր սպասուհիներից է»: Բէկը մի քիչ դիմա-
դրեց, բայց յետոյ համաձայնեց ու ասաւ աշուղին:
«Լսիր աշուղ, մենք մի սպասուհի ունենք, նա նոյն-
պէս ածող ու երգող է ու շատ սիրում է երգով վի-
ճաբանութեան մէջ մտնել, արի զու նրա հետ երգիք
ու նուազիք, միայն թող նա առաջ քեզ հարցելը ա-
ռաջարկի, զու նրան պատասխանիր»:—Աշուղը ուրա-
խութիւնից քիչ մնաց խելքը կորցնէր, միայն իրան
պահեց ու ասաց. «Աղա, ես մի պայման կառաջարկեմ,
թէ որ ձեր սպասուհին ինձ յաղթեց, ինձ թքեցէք,
մորթեցէք, մի լաւ անպատուեցէք ու վոնդեցէք, թէ

որ ես յաղթեցի նրան, տուէք ինձ. համաձայն էք»:
Բէկը և իւր կառաւարիչը մի քիչ շփոթուեցին ու
միմեանց երես նայեցին: Քաջ Ասմանը նրանց շատ
նեղը կապեց. չէին սպասում որ մի խեղճ, թափա-
ռական աշուղ այդպէս բան կառաջարկի, դա չլինելու
բան էր. մանաւանդ որ սպասուհին սպասուհի չէր,
այլ խանումների գլխաւորն ու բախտ ու պարծանքը
Զէջանը. Կառաւարիչը դարձեալ վիսփսաց Բէկի ա-
կանջից: «Համաձայն ենք Բէկ, միթէ այս խեղճ մար-
դը պիտի կարողանայ իւր հարցերով կապել Զէջա-
նին, որ կըթուած ու ուսումն առած է ու ամեն բան
գիտէ. Եթէ յաղթեց էլ, չենք տայ, խօ մեր ձեռքից
խլելու չէ»: Խոսրով-Բէկը գնաց աղջկայ մօտ և ասաց,
որ մի բանաստեղծ ու երգիշ հովիւ է եկիլ, որ պիտի
ածէ ու նուազէ նրա մօտ. թէ որ ուզում է թող
հարցեր առաջարկէ: Միայն աշխատիր չը յաղթուես,
—որովհետև պայման ենք արել՝ կամ քեզ նրան տանք
կամ անպատիւ անհնք, վոնտենք, զնա կորչի: Աս-
մանը սազը նորից կարգի բերեց ու ոգեսրուած եկաւ
Զէջանի մօտ, որը վարագոյրի յետև նստած էր պատ-
րաստ: Սկսեցին նուազածութիւնը՝ տղան զըսից, աղ-
ջիկը ներսից մինչեւ, որ աղջիկը սկսեց երգել:

Ա. Դ. Ֆ. Կ. Բ.

Աշուղ, արի տուր պատասխան,
Ո՞վ է սիրոյ հեղինակը,
Ո՞վ եղաւ զոհ եղբայրութեան
Ու առաջին նահատակը:

S Դ. Ա. Ն.

Գիրքը կասէ, սէր է Սատուած, ոյի և զի՞ն
առ զմայն նա է սիրոյ հեղինակը, ամ սպա զմամեմին
այսակ ձը Արէլ Կայէնից սպանուած,
է առաջին նահասուակը:

Ա. Դ. Զ. Ի. Կ. Բ.

Աշնու, ինչն է լու, թանկագին, առաք ու զատաց
Որ չի մեռնի բոլորովին,
Մուսաները ուր կը հանդչին,
Ուր աւուր է նրանց գղեսկը:

S Դ. Ա. Ն.

Բարի անունն է թանկագին,
Որ չի մեռնի բոլորովին,
Մուսաները, որ կը հանդչին,
Պարնաս սարն է այն դղեսկը.

Ա. Դ. Զ. Ի. Կ. Բ.

Աշնու, արի գու ինձ անու,
Բացատրէ միտքս հիմա,
Մուսաներու ձեռքում ինչ կայ,
Ինչ է նրանց աղաղակը:

S Դ. Ա. Ն.

Հոգիս, ահա մօտիկ եկայ,
Բացատրէմ միտքս հիմա,
Մուսաներու ձեռքում գիրք կայ,
Սրգն է նրանց աղաղակը:

Ա. Դ. Զ. Ի. Կ. Բ.

Ուր տեղ կը զնայ արդարը,
Որն է նրա ճանապարհը,
Քանի կրօնք կայ աշխարհը,
Ինչ է նրանց նպատակը:

S Դ. Ա. Ն.

Դրախտ կ'զնայ արդարը,
Նրկինքն է իւր ճանապարհը,
Չորս մեծ կրօնք կայ աշխարհը,
Աստուած նրանց նպատակը:

Ա. Դ. Զ. Ի. Կ. Բ.

Այն ինչ դաս էր որ առաջին,
Հպարտացաւ ընկաւ գետին,
Մարմնաւոր է, թէ անմարմին,
Ինչ կերպ ունի հրեշտակը:

S Դ. Ա. Ն.

Սաղայէն էր դաս առաջին,
Հպարտացաւ, ընկաւ գետին,
Ինձ հարցնես, չունի մարմին,
Օդեղէն է հրեշտակը:

Ա. Դ. Զ. Ի. Կ. Բ.

ԼեթջԱնին եմ խօսքս պրծայ,
Ինչը կայ և գեռ կը մնայ,
Ինչ բան է, որ միշտ կը դառնայ,
Չի մաշուիլ անիւի ակը:

Տ Դ Ա Ն.

ՕՍՄԱՆԻՆ եմ, ասեմ ահա,
Երկիրը կայ և կը մնայ,
Այն աշխարհն է միշտ կը դառնայ,
Զի մաշուլ անխուլ ակը:

Մէկը միւսի երգին, թէ նուազածութեանը շատ
հաւանիցին. կարծես զգում էին, որ իրենք օտարներ
չեն, այլ շատ մօտ մարդիկ են: Ամբողջ երեք օր ա-
ռաւօտից երեկոյ օրիորդ Զէջանն ինչ հարց որ տուց,
Ասմանն իսկոյն պատասխանեց. հերթը եկաւ նրան,
տեսնենք, ինչ է ասում:

Տ Դ Ա Ն.

Այն ինչ բան է, երեք ոտքի վրայ է,
Հոգի չունի, սակայն մնում է կանգուն,
Քառասուն թև ունի, բայց անդայ է,
Մարդ է շինել, տեսարան է շատ սիրուն:

Այն ինչ բան է անխղճմտանք անաստուած,
Լափում կուլ է տալիս ամեն արարած,
Ի՞նչն է արիւնաբրու և համատարած,
Ունի սարսափելի ահռելի անուն:

Այն ինչ բանէ, կեանքն է բոլոր մարդկութեան,
Աշխարհը մթնում է միշտ առանց նրան,
Ի՞նչ տանիք է, չի հնանում յաւիտեան,
Կանգնած՝ ոչ պատ ունի և ոչ մէկ հատ սիւն:

Ի՞նչ իմաստուն սիրոյ ձեռքից մոլորուած,
Բարե բռնեց կուռքի առաջ խոնարհուած,

Այն ինչ բարձր բան է ամպերուն հասած,
Գլուխը ձմեռ է, ոտքերը զարուն:

Ասմանը դիտմամբ այնպիսի հեշտ բաներ առա-
ջարկեց, որ Զէջանը առաջին անգամից չը խուսափի
ու հեշտութեամբ պատասխանի քայլ օրիորդը սրան
էլ չը պատասխանեց, չը կարողացաւ, թէ չուզեցաւ,
լռեց, ոչ մի ծպտուն չը հանեց: Այն ժամանակ Խոս-
ըով-Բէկը և այնտեղ գտնուող մեծերը տղային խնդ-
րեցին, որ ինքը պատասխանէ իւր տուած հարցերին
ու բացատրէ ամեն ասածը: Ասմանը յօժարեց, սազը
վերցրեց ու սկսեց մէկ մէկ բացատրել իւր հանելու-
կային երգը. բոլորը ուշադրութեամբ լսում էին:

Այն կամուրջն է, երեք ոտքի վրայ է,
Հոգի չունի, սակայն մնում է կանգուն,
Քառասուն թև ունի, բայց անդայ է,
Մարդ է շինել, տեսարան է շատ սիրուն:

Այն հրդեհն է անխղճմտանք անաստուած,
Լափում, կլանում է ամեն արարած,
Ծովն է արիւնաբրու և համատարած,
Ունի սարսափելի, ահռելի անուն:

Այն արեն է, կեանքն է բոլոր մարդկութեան,
Կը մթնէ աշխարհը միշտ առանց նրան,
Այն երկինքն է, չի հնանայ յաւիտեան,
Կանգնած, ոչ պատ ունի և ոչ մէկ հատ սիւն:

Սողոմոնն է սիրոյ ձեռքից մոլորուած,
Բարե բռնեց կուռքի առաջ մոլորուած,

Մասիս սարն է գլուխին ամպերուն համած,
Վերեք ձմեռ է, ներքեք գարուն:

Երգեցողութիւնը վերջացած համարեցին: Խոս-
րով-Բէկը իւր խօսքը մոռանալ ուզելով կամնցաւ որ
այդ աշուղին մի կերպ ճանապարհ ձգի: Զեռքը զըս-
պանը տարաւ մի քանի ոսկի հանեց ու դըեց Ասմա-
նին բուռը. «առ քեզ պարզե, աշուղ, ապրիս, մեզ
ուրախացրիր. ուրիշ անդամ էլի կը հանդիպենք ու
աւելի կը վարձատրեմ քեզ. Ասմանն ասաց. «Բէկ,
չնորհակալ եմ քո վարձատրութիւնից ու պարզեից.
Ես փող չեմ ուզում, դու կատարիր քո խօսքը. չէ
որ մենք պայման արինք, ու այդ պայմանի գօրու-
թեամբ այն աղջիկը ինձ է պատկանում: Բէկը տես-
նելով, որ իսկ արդարութիւնը նրա կողմն է ու ինքը
ամօթահար եղաւ, բարկացաւ, գուաց ու սկսեց հայ-
հոյանքներ թափել խեղճ տղի զլիսին: «Ես կատակ
էի անում, քեզ վըայ ծաղըում, տխմար լակոտ, դուն
ով ես, որ մեր տանից աղջիկ տանիս. այս ըոպէին
վնայ, կորիք, եթէ չես ուզում, որ մի փորձանք դայ
զլիսիդ.—որոտաց Խոսքով-Բէկի իշխանական ձայնը:
Ի՞նչ անէր խեղճ Ասմանը, բարկութիւնից տըաքւում
էր. իրեն կարծում էին հովիւ, կամ թափառական
խեղճ աշուղ, իսկ եթէ յայտնէր իւր ով լինելը, գուցէ
աւելի վատ լինէր, չը գիտէր ինչ անէր. Բայց քա-
ջութիւն ունեցաւ Բէկին մի երկու խօսք ասելու:
«Խոսքով-Բէկ, ասաց նա—լաւ է լինել ազնիւ հովիւ,
քան անազնիւ իշխան։ Ես արդարութիւն եմ պահան-

ջում աղջիկը, որովհետև յաղթել եմ. իսկ դու անազ-
նիւ ես որ յետ ես վերցնում քո տուած խօսքդ. տղա-
մարդու համար ամօթ բան է իւր թքածը լիզելը: Բէկը
կատաղեց, սաստիկ բարձը զոռալուց ձայնը
կտրուեց, ձեռքը տարաւ դաշոյնին, բայց մարդիկ
բունեցին ու չթողին արիւնհեղութիւն պատահի: «Բըռ-
նեցէք այդ անիրաւ փուչ կենդանուն ասաց Բէկը,
ձեռք ու ոտքը կապեցէք, որ խելքը գլուխը գայ
ու հասկանայ թէ ում հետ է այդպէս խօսում, դա-
հին, կանչեց Բէկը. Ես գնում եմ որսի ու մինչև իմ
վերադառնալը պէտք է լակոտին ոչնչացնէս» Խոս-
քով-Բէկը իւր մարդկանցով գնաց դիմացի անտառը
որսի. դահինը եկաւ որ Ասմանի ձեռք ու ոտքը կապի:
Նա խնդրեց դահինից որ իրին թոյլ տայ մի երգ ա-
սելու. Նա համաձայնեց. Ասմանը Զէյջանի վարագոյ-
րին մօտենալով սազը զընգընդացրեց ու սկսեց այս
երգը:

Տ Դ. Ա. Ն.

Ո՞վ Զէյջան, եկել եմ իս քեզ ման գալու,
Որոգայթն եմ ընկել, ազատ արա ինձ,
Հայրդ աշխատում է կեանքիս վերջ տալու,
Հասկացիր իմ գրութիւնս խղճա ինձ:

Ա. Դ. Զ. Կ. Բ.

Սարից իջած բիրտ ու կոսկոտ վայրենի,
Ինձ առնելն է նպատակդ խեղճ հովիւ,
Պատիւ ու ամօթանք դու չունիս իսկի,
Ինձ առնելն է նպատակդ խեղճ հովիւ:

Տ Դ. Ա. ն.

Մահը եկաւ լարեց նետ ու աղեղը, ու ում դո ու այս
Ինչո՞ւ իգուր մեռնիմ, ինչ է իմ մեղը, ամուռ արշան
Հիմա ինձ կապաննեն կը գցեն նեղը,
Մէկ բաց վարագորդ մի բան ասա ինձ,

Ա. Դ. Զ. Ի. Կ. Բ.

Կոպիտ հովիւ քու արածը մեծ բանէ, ու այս
Քեզ նման անգէտին ովկ կը պաշտպանէ, նախու ու
Մեռնելը քեզ նմանին արժան է,
Ինձ առնելն է նպատակդ խեղճ հովիւ:

Տ Դ. Ա. ն.

Ինձ նման անմեղին սառ գերեզմանը,
Գնել չի վայելում քու մեծ անուանը,
Գեռահաս եմ մի ցանկալ իմ մահուանը,
Արդար եմ, անմեղ եմ, հասիր, դժո ինձ:

Ա. Դ. Զ. Ի. Կ. Բ.

Տղա, մւրտեղից ես գալիս տարաժամ,
Ունիս դու հայրենիք կամ ազգ ու երամ,
Զէջանն եմ Ասմանին տեսնել կը ցանկամ,
Ինձ առնելն է նպատակդ խեղճ հովիւ:

Տ Դ. Ա. ն.

Մօտդ կանգնած չես ճանաչում Ասմանդ,
Խօսքով վէրք ես տալիս բացած բերանդ,
Արժէք չէ ունեցել առւած նշանդ,
Եետ եմ տալիս, առ քեզ, էլ պէտք չի դայ ինձ:

Երգը պըծաւ թէ չէ Ասմանը աղջկանից իւր ստացած
մատանին ծոցից հանելով նետեց զէպի վարագոյրի
ներսը: Զէջանը տեսաւ ու Ասմանի անունը լսեց թէ չէ, իսկոյն գուրս թռաւ վարագոյրի յետեկից, գլուխը բաց, հերարձակ, կիսահազնուած ու ընկաւ դահճի ստները, որ խնայէ իւր սիրելուն: Դահիճը այս անսպասելի զէպից զարմացած ու ըգգացուած թողեց Ասմանի ձեռքը: Զէջանը խօսքելու ուղղելով զէպի դահիճը երգեց այսպէս:

Աղաչում եմ, խնդրում եմ, մի անիլ վատ բան,
Թէ Աստուած կը սիրես, խղճա Ասմանին,
Մի դասնալ Գարըիէլ, անգութ հոգեհան,
Թէ Աստուած կը սիրես, խղճա Ասմանին:

Անգութ հայրս իւր վափագին չը հասնի,
Ինչ որ սրտով որոնում է, չը գտնի,
Ինձանից զատ որդու երես չը տեսնի,
Թէ Աստուած կը սիրես, խղճա Ասմանին:

Զէջան, թանգ անունդ դարձրիք արձիճ,
Աղպեց աչքիդ արտասուրը դարձաւ լիճ,
Դորժը քեզ յայտնի է ով պարոն դահճի,
Թէ Աստուած կը սիրես խղճա Ասմանին:

Երգը վերջացրեց, դահիճն առատ ընծայ տալով Ասմանին նրա ձեռքից աղատեց: Տղան աղատութեան համար մեծ շնորհակալութիւն տուեց իւր սիրելի Զէջանին ու ասաց: «Քանի որ քու անգութ, ըռնակալ հայրդ կայ, մենք մեր վափագին չը պիտի հասնինք, ուրեմն լաւ է որ մի առժամանակ այստեղից հեռա-

նամ ուրիշ երկիր գնամ, թող մի միջոց անց կենայ,
նրա բարկութիւնը իշնի ու ինքը գուցէ խղճի գայ
ու ինձ փնտռի: Ասմանը մնաս բարով պիտի ասէր,
սաղը վերցրեց տեսնենք ինչ է ասում—

Տ Դ. Ա. ն.

Անջատան օրերը հասան ով Զէջան,
Գուրս ինեմ քիչ օտար երլիներ ման գամ,
Գառնութիւնը տեսնեմ ես օտարութեան,
Ճաշակեմ պառողը լեզի ու անհամ:

Տ Դ. Զ. Ի. Բ.

Երխասարդ եթէ ինձ հետ սէր ունիս,
Գնա կտրիչ, Աստուած յաջողութիւն տայ,
Վախնամ յետ դառնաս, էլ ինձ չը տեսնիս,
Գնա կտրիճ, Աստուած յաջողութիւն տայ:

Տ Դ. Ա. ն.

Թողնում եմ իմ հայրենիքս թանկագին,
Թշնամիքս լեզուիս վրայ սանձ դրին,
Օտար ձեռք չը դիակի վարդիս կոկոնին
Պայմանիդ հաստատ կաց, պահիր անթառամ:

Ա. Դ. Զ. Ի. Բ.

Մեր թշնամիները Աստծուց դանին,
Կուրանայ աչքերը, արիւնով լցուին,
Խնդրում եմ բոյսի պէս չորանան թումին,
Գնա կտրիճ, Աստուած յաջողութիւն տայ:

Տ Դ. Ա. ն.

Սոլսակը վասփագէ վարդի բացուերուն,
Սիրահարը կարօտ քաղցր պիրելուն,

Ասմանը գնում է խեղճ կը մնաս դուն, Վայսանած վըր
Աւանդս լաւ պահիր, յետ գամ ստանամ:
Ո. Դ. Զ. Ի. Կ. Ը.

Զէջանն եմ, այս խօսքը սրտիցս կասեմ,

Ես ինձ ագուղների կարզը կը գասեմ,

Մինչեւ մասն ճանապարհող կը սպասեմ,

Գնա կտրիճ, Աստուած յաջողութիւն տայ:

Թէ Ասմանը, թէ Զէջանը շատ դժուար կացու-
թեան մէջ էին. ուղում էին միմեանցից ըլ հեռանալ,
բայց վախենում էին թէ Խոսրով-Քէկը որ տեղ մը է
կը վերադառնայ ու հէնց իւր ձեռքովը կապանի եր-
կուսին էլ: Վերջապէս Ասմանը քաջութիւն ունեցաւ
վերջին մնաս-բարովն ասելու. Օրիորդը տեսնելով որ
իւր թանկագին սիրելին այլ ևս շի կարող ուշանալ,
շտապով գնաց իւր զգըցը բաց արեց, հանեց նրա
միջից մի ոսկի սանզը ու տուեց Ասմանին: «Ահա այս
սանզը քեզ յիշատակ, իմ անդին Ասման – ասաց նա...
քանի զլուխդ սանզը ինձ յիշիր, թէ և վատահ եմ,
որ առանց մի բանի էլ ինձ մոռանալու չես: Ենակէս
զիտեցիր թէ ես եմ մազերդ ուղղում, գլուխդ շոյում»:
Ասմանն էլ իւր մատից հանեց իւր մօր ընծայած ա-
զամանդեայ մատանին տուեց Զէջանին վոխադարձ
յիշատակի համար: Եթոյ մի անզամ էլ վիաթաթուե-
ցան, մի կուշտ համբուրուեցին ու մնաս բարով ասե-
լով արտասունով հեռացան միմեանցից: Ասմանը
Աստուած կանչեց ու հեկեկալով հեռացաւ Խոսրով-
Քէկի ամառանոցից զէպի իւր ձիու մօտ, որ այնտե-

զից ճանապարհ ընկնի հեռու աշխարհ, խեղճ Զէջան,
այդպիսի հրաշալի, այդպիսի հրեշտակ աղջիկ ինչու
պիտի տիրէիր ու արտասուէիր: Եւ իրաւ Զէջան մի
ասիլ մի հիւրի-փերի մի յաւերժահարս ասա. աւելի
լցուել, աւելի գեղեցկացել, աւելի հասել, բացուել,
եղեմի մի անթոշնելի վարդ էր դառել, ինչ կը սա-
զէր նրան նեղութիւն քաշելը: Կաւ համբերութիւն ու
քաջութիւն ունես Ասման, որ ալդպիսի երկնային
հրեշտակին, ոսկեփետուը աղունակին թողնում դնում
ես: Չը պիտի մոռանաս Զէջանի վայելուշ ու բարեձև
հագակը, գեղեցիկից գեղեցիկ պատկերը, ալ-կարմիր
վարդ թշերը, բուստ պոռնկները, մանր ու սիրունիկ
մարդարիտի պէս սաղափ ատամները, անարատ կա-
թի նման աղբիւը բերանը, ֆարֆուրի ֆինճան կզա-
կը, սպիտակ-լայն ճակատը, խելքի շտեմարան գլու-
խը, մետաքսահիւս ոսկեթել մազերը, ճարտար լե-
զուն: Այդպիսի մի շքնաղ ու անզուգական, աննման,
անարատ կոյսը Ասմանի վայ ու բաժինն է, կասեն
ամենքը, որովհետեւ նա էլ սրանից պակաս չէ, կար-
ծես Աստուծոյ պարապ ժամանակն է եղել, նստել ու
իւր ձեռքով նկարել է Զէջանին ու Ասմանին:
Օքը մթնել էր: Ասմանի գնալուց յետոյ Զէջանը
եկել իւր վրանում մի օթոցի վրայ պարկել էր ու
մտածում նրա մասին: Նա կարծում էր թէ երիտա-
սարդը իրենից նեղացած հեռացաւ, սաստիկ զղաց,
որ ինքը երգի մէջ վիրաւորական խօսքեր ասեց նրան:
«Ի՞նչ արի ես, ասում էր նա.—բաւական չէր որ
հայրս նրան դահճի ձեռքը տուեց, ես էլ երգով ան-

պատիւ խօսքեր ասացի նրան. ինչով է մեղաւոր այդ
երիտասարդը, որ ինձ սիրում է»: Այս խօսքերի հետ
զուս եկաւ վրանից ու ման գալով գունդունաց հե-
տևեալ երգը—

Գուն իմ ամառանոց իմ գրօսարան,
Սրդեօք հոգիս ինձնից գոհ սրտով գնաց,
Սւելապակա խօսքեր ասացի նրան,
Սրդեօք կեանքս ինձնից գոհ սրտով գնաց:
Ո՞հ, ձեռքիցս թռաւ անգին բազէն իմ, սկսանք
Զարնիմ ինձ սրտակից, չունիմ մտերիմ,
Քիչ է մնում ուշաթափուիմ վայր ընկնիմ,
Սրդեօք ջանս ինձնից գոհ սրտով գնաց:

Գարնան մօտիկ ծաղիկներդ բացւում են,
Քաղցը հատից թռչունները հրճում են,
Աղբիւըներդ կրկչալով վագում են,
Սրդեօք սէրս ինձնից գոհ սրտով գնաց:

Զէջանն եմ, հոգեակէս անջատուած կուլամ,
Սզուրի պէս անմիխթար ման կուզամ,
Խօսիք սարեր, ձորեր, մէկ բան իմանամ,
Արդեօք յայս ինձնից գոհ սրտով գնաց:

Խոսրով-Բէկը որսորդութիւնից դարձաւ ամառա-
նոց: Լսեց որ առաւօտեան իւր պատժի ենթարկած
երիտասարդ աշուղը վախել է, կատաղեց, վրժաց,
կանչեց գահճին, որ իմանայ պատճառը, ասին որ
նա էլ է վախել, չի երկում: Մարդիկ մէջ ընկան,
հանգստացրին, մեղմացրին Բէկին, բայց նա մտքու-

մը վճռեց, որ Զէջանին մարդու տայ ու ազատուի
նրա տուած նեղութիւններից:

Աշնանային օրերը հասել էին. չովն ընկել էր,
դաշտ ու անտառ զովացրել. Ամարանոց դալողները
հետղհետէ վերագանում էին քաղաք. Դարձաւ նոյն-
պէս և Խոսրով-Բէկի ընտանիքը. Բէկը իւր որոշումը
կատարեց, տուն դառնալուն պէս իւր աղջիկը նշանեց
մի հարուստ ազնուականի հետ. Փեսացուի անունը
Զալալ-Բէկ էր, մի մեծամիտ զոռոզ մարդ, իւր բէ-
կութիւնով ու ոսկով հպարտացող ու փրուզ երիտա-
սարդ. Խոսրով-Բէկը իւր փեսի հետ պայման արեց
վեց ամսից յետոյ կատարել պսակագրութիւնը, մինչև
որ Զէջանը տկարութիւնից կազդուրուի ու ինքն էլ
հոդայ օժիտի և այլ պէտքերի գոծը. Անբախտ Զէ-
ջանը, որ իմացաւ իրան նշանել են արդէն Զալալ-Բէկի
հետ առանց իւր համաձայնութեան, քիչ մնաց գժուէր.
Հանեց իւր վրայից զոյնզոյն հանդերձները և ոտքից
զլուխ սենը հագաւ. Այլևս ժայիտ չէր դալիս նրա ե-
րեսին, ամեն օր լաց ու թաց, ամեն օր արտասուք:
Սպասում էր թէ մի օր հասնի իւր բախտ ու պար-
ծանք Ասմանը. Խոկ Ասմանն այդ ժամանակ ով գիտէ
որ տեղ էր, ինչ էր անում, յիշում էր Զէջանին թէ
մոռացել էր, Ընկել էր սար ու ձոր, գժուածի պէս
ման էր դալիս, ահա հասաւ մի բարձր սարի, ուզում
էր բարձրանալ միւս կողմն անցնելու, յանկարծ եր-

կինքը ամպեց, սկսեց յորդառաստ անձրևաթափել,
անձրէից յետոյ սառն քամի փչեց ու ձիւն տեղաց,
տարաբախտ երիտասարդը մնաց մոլորուած այս զրու-
թեան մէջ, ցուրտ ու բուքը նրա ճանապարհը կտրեցին.
Նա սազը ձեռքը առաւ ու երգեց հետեւալ երգը:

Տէր իմ Աստուած Քեզ յայտնի է ամեն բան,
Ման մի տար, ապրելու ժամանակ տուր ինձ,
Յուրա ու բուքը ինձ արել են անկենդան,
Եռանդ, կենդանաւթիւն և կրակ տուր ինձ.

Դրկէ զօրութիւնդ, որկէ, Տէր, ինձ մօոյ,
Թող խաւարին յաջորդէ լոյս, առաւօտ,
Խղճուկ ծնողներու չը մնամ կարօտ,
Մէկ բարի առաջնորդ, օրինակ տուր ինձ.

Թող մահուանս լուրը հայրենիք հասնի,
Աննման Զէջանս թող սենը հագնի,
Առ քո տուած հոգին կրկին քեզ լինի,
Երկնային գաղափար նպատակ տուր ինձ.

Ասմանն եմ խնդրում եմ ջերմեռանդ սրտով,
Աղերսում եմ, Տէր իմ, անշփոթ հոգով,
Մի անդամ էլ տեսնեմ աշխարհը աչքով,
Վերջի օրս է պայծառ արեգակ տուր ինձ.

Ինչ որ խնդրեց, այն էլ կատարուեց. Օրը բա-
ցուեց, ցուրտ ու բուքը դաղարեց, մառախուղը պար-
զուեց. Ասմանը շարշարում էր ճանապարհը գտնել
ու առաջ գնալ, Մէկ էլ ահա նրա դիմացը ելաւ մի
ձիւոր, ձին ձիւնի պէս ճերմակ, ինքը սաթի պէս

սե շորերով մի խորհրդաւոր ծերունի: Երբ նա մօտեցաւ Ասմանին, նա զարմացաւ որ այդ պատկառելի մարդուն, ինքը ուր տեղ որ տեսել է, ո՞վ էր նա ուրեմն, հազիս մտաքերեց որ իւր երազում երեցող ճգնաւորն է նա: Ո՞վ սուրբ հայր, Աստուած ուղարկեց քեզ այս ժամանակ ինձ ուղեցոյց լինելու: Սաղը ձեռքը առաւ ու երգեց այս երգը.

Դու, ով սուրբ ճգնաւոր, դու բարով եկար,
Քեզ իմ օգնութեանս տէրը ուղարկեց,
Իմ նեղը մնալը դու բնչ խմացար
Քեզ իմ օգնութեանս Տէրը ուղարկեց,

Ո՞վ դու սուրբ ճգնաւոր, դու իմ բարերար,
Մըտիս իդը դու չժողիր անկատար,
Բնաւ յոյս չունէի ապրելու համար,
Քեզ իմ օգնութեանս Տէրը ուղարկեց:

Ճյա ամայի տեղում մնանակ մնացել,
Սուգ ու շիւան արել, չատ եմ ողբացել,
Ուժս սպառուէլ է ջանքս թուլացել,
Քեզ իմ օգնութեանս Տէրը ուղարկեց:

Ասմանն եմ, չը զիտեմ որ կողմից եկայ,
Ճանապարհս կորաւ, այս կողմը ընկայ,
Ինձ պաշտպան լինելու ես նոր իմացայ,
Քեզ իմ օգնութեանս Տէրը ուղարկեց:

Երգից յետոյ ճգնաւորն ասաւ տղային, «Այ որդի, այս ձիւնին ու ցելին, քամուն ու բուքին, ոտքով ինչպէս ես բարձրանալու այս սարը և հասնելու քո

տեղը: Բարձրացիր իմ գաւակը ես քեզ կը տանեմ: Ասմանը վեր կացաւ զտղողալով նստեց ձիաւորի քամակը ու ձիու կատաղի փոշտումից ու մոնչումից վախեցած աշքերը խփեց: Նա էլ չիմացաւ թէ ինչ եղաւ, հրեղէն ձիու պէս սլացաւ, ձին հողմի պէս ու սուրաւուրալով հասաւ նշանակեալ տեղը: Եթիտասարդը բացեց աշքերը և ինչ տեսնի—մի ահազին վիթխարի քաղաք, եօթը բուրներից կազմուած մի աշխարհ: Երեք կողմը ծով, մի կողմը ցամաք, բարձր, երկիարկանի հոյակապ տներ, լայն ու նեղ վողոցներ, զանազան տեսակ նաւեր ու մակոյկներ արագ-արագ գնում գալիս են, որը բեռ է տանում որը մարդիկ: Տիրում էր ընդհանուր խառնաշփոթ ազմուկ: Նաւերու հաստ ու բարակ սուլոցները մի կողմից, մօլաների բարձր մզկիթներից արձակած կոչական ձայները, միւս կողմից կեանք էին տալիս այդ բազմամարդ բաղաքին: Այդ քաղաքի անունն էր Մուղրուպ: Ճգնաւորը առաւ տղային տարաւ մի մեծ մաքուր սրճարան որ զեղեցիկ կերպով կահաւուած էր արեւելսն փափուկ բազմոցներով ու թանկագին գորգերով, չորս կոմը ու առաստաղը մեծ մեծ հայելիներ ու գոյնզգոյն ապակիներ: Լուսամուտների զոգերում թանգ գնանոց զլգլակները, սիւներից քաշ արած տեսակ տեսակ ծխաբարչները, թարաքներում շարուած ֆարֆորի ֆինճանները, Ասմանի վրայ մի ուրախութիւն բերին, վաղուց է որ նա ցանկանում էր տեսնել մի այսպիսի սրճարան, նա զըքերումն էր միայն կարդացել նկարագրութիւնը: Նրանք նստեցին

մի մի սուրճ խմելու։ Չորս հինգ կտյառառ երիտասարդ սպասաւորներ թոշունի պէս արագավագ կատարում էին յաճախորդների պատուէրները։ Ճգնաւորը իւր մօտ կտնչեց սրճարանի տիրոջը Ապուտ աղային ու ասաց. «Ապուտ, ահա այս տղան քեզ եմ յանձնում, իմ հոգեղաւակն է. քեզ մօտ աւանդ եմ թողնում լաւ նայիր ու պահպանիր սրան. Վերադարձիս կրկին կը պահանջեմ քեզանից, եթէ Ասմանին մի վնաս պատահի, իմացիր որ գու ինձ պարտական կը մնաս, ու իմ անէծքը անպատճառ քեզ կը փշացնի», Յետոյ դառնալով երիտասարդին ասաց. «Ասման երբէք մի վախենալ քանի ես քո բարեկամն եմ. հոգ մի անիր երբ որ պէտք ունենաս ես կը հասնեմ. կաշխատեմ շուտ շուտ տեսնել քեզ, Դէ՞ մնաք բարով...» ասեց ճգնաւորն ու հեռացաւ. Յաճախորդները սրճարանում լցուած էին տեսան Ասմանին եկան մօտիկ ու սազը տեսնելով կարծեցին Աշուղ է, խընդցեցին որ մի բան նուագի ու երգէ, Ասմանը «չէ» շասաւ. առաւ սազը լարեց ու խօսքերն ուղղելով Ապուտ աղային երգեց այսպէս. —

Հեռու ընկայ աղգականից երկրից,
Եկայ հասայ ձեր աշխարհը, սրճարան,
Վիրաւոր եմ սիրոյ նետից ու սրից,
Որոնում եմ վէրբիս ճարը, սրճարան.

Ես մի վարդ ունէի չքնաղ աննման,
Նրա սոխակն էի երգով, երդաբան,
Անդութ բախար, հասցրուց այս զրութեան,
Զարնեց գլխիս պարսաքարը, սրճարան.

Իրան ոտքը կը գայ, մարդ ինչ որ կանի,
Զըկանիք ու բնութիւն ոչ ոք չի տանի,
Բարիք գործողներուն հազար երանի,
Զարով կը կործանի չարը, սրճարան։

Ասմանն եմ, խօսքերս կըակ են, հուը են,
Սփոփիչ բառերը ինձ համար զուր են,
Եմ լարերուս հնչինները տխուր են,
Յաւ է երգում իմ քնարը սրճարան։

Ցողոք լսողները չնորհակալ եղան, խօսեցին, միսիթարեցին երգչին. Արուտ աղան նոյնպէս շատ ուրախ էր որ այգակիսի մի չնորհալի երիտասարդ իւր մօտ է եկել. Այցելուները զնալով զնալով աւելի շատանում էին այնպէս որ ուրիշ սրճարաններից շատերը գալիս էին Արուտ աղայի մօտ լսելու նորեկ աշուղին. Դրա համար էլ Ասմանի Մաղրուագ գալած օրուանից քաղաքի աշուղները թշնամացել էին նրա հետ, որ նրա զալով իրենց գործը վատացել է ու լող շը կայ. Աշուղների գլխաւորը, որի անունն էր Սապահի իւր վեց աշակերտների հետ մի օր եկաւ Ապուտ աղայի սրճարանը ու կանչելով իւր մօտ Ասմանին ասաց. «Ո՞վ ես դու, ո՞րտեղից լուս ընկար, ինչպէս ես վստահանում առանց ինձնից հրաման տունելու այստեղ Մաղրապում երգում ու նուագում. միթէ շը զիտէս որ մեր քաղաքում կարդ կայ, կանոն կայ, պէտք է մեղ մօտ ծառայես, որոշ ժամանակ, յետոյ աշակերտութիւնից վարպետութեան հասնես ու սկսես աշըլութիւնը. կամ թէ չէ պէտք է մեզ հետ վէճի, բանակուի մէջ մտնես երգով ու նուագով պէտք է փորձուիս։

Ապուտ աղային շատ դժուար եկաւ աշուղի այդ նկատողութիւնները, ուզեցաւ նրանց հեռացնել, բայց Սսմանը չը թողեց ու գառնալով դէպի աշուղները ասաց. «Վարպետներ, դուք իզուր տեղն էք անհանգիստ լինում. ես կիանքումս ոչ ոքի վնաս չեմ տուել, ձեզ էլ իմ վնասը չի հասնի. մէկ որ աշըզութիւնը իմ արհեստ չէ, նրանով չեմ ապրում, մէկ էլ որ այդ իմ սազը որ ձեզ աշքին փուշ է գարձել, զա իմ անբաժան ընկերն է. պանդխտութեան մէջ իմ միակ մխիթարանքն է սա. ես ածում եմ ու երգում եմ քեֆիս համար, բայց եթէ դուք ուզում էք որ ես աշակերտ լինեմ ձեզ, կամ ձեզ հետ փորձուիմ, ես համաձայն եմ ձեր վերջին առաջարկն ընդունելու. չըամայցէք ահա ասպարեզը ինչ որ կամիք ասացէք. ես էլ զուցէ խօսք գիտեմ պատասխանելու. Ասմանը սազը վերցրեց նստաւ եօթը աշըզների մէջ ու սկսեցին երգեցողութիւնը. տեսնեք ինչ է ասում Սաղահին և Ասմանն ինչ է պատասխանում:

Ս. Ս. Պ. Ա. Հ. Ի. Ն.

Եօթը առիւծներու դիմացը նստած, Կուզէ կոիւ անել մի դաշտային մուկ, Միամիտ թռչուն է արձուց հալածուած, Որոգայթ է ընկել որպէս ճնճըդուկ:

Ա. Ս. Մ. Ա. Ն. Բ.

Եօթը վախկոտ մկներ, արջ կատուից փախած, Ընկել է սրտերու մէջը վզվզուկ,

Արտաքուսա սնափառ կեղծ առիւծ դարձած, Իրանց սև օրերը լալիս են ծածուկ:

Ս. Ս. Պ. Ա. Հ. Ի. Ն.

Օչ վաբակտ է տեսել ոչ ունի անուն, Մէկ ժանդուած ընեւ առանց կոթ հերոն, Խառնուում է աղամարդկանց գործերուն, Ծծից նոր կտրուած մի տիամար մանուկ:

Ա. Ս. Մ. Ա. Ն. Բ.

Եօթը իրար նման չորացած դդում, Հաւաքել զիլին տալիս է ուսում, Խնքը իրան աղամարդ է համարում, Խելքից պատուհասուած մի անդէտ ծերուկ:

Ս. Ս. Պ. Ա. Հ. Ի. Ն.

Մենք նրա պէս շատի բերանն ենք փակել, Շատի սազը խլել, շատին արձակել, Ուզում է աշուղի անուն հոչակել, Մի վայրենի, սարից իջած խեղճ լամուկ:

Ա. Ս. Մ. Ա. Ն. Բ.

Մէկ մեծամիտ տգէտ անգութ բռնակալ, Արհեստին անտեղեակ, յիմար կասարեալ, Ուզում է մեղրահամ շամամ ձեանալ, Մէկ անցած ու լսկած հստած ձմերուկ:

Ս. Ս. Պ. Ա. Հ. Ի. Ն.

Խոսքերս այրում են վառ կրակի պէս, Կտրուկ են, ազդու են սուր դանակի պէս,

Համբաւս փայլում է արեգակի պէս,
Աշուղ Սապահին եմ, անուանի յատուկ:

Ա. Ս. Մ. Ա. Ն. Բ.

Ես Ասմանն եմ, նուիրական պառող եմ,
Դաւթի պէս երդիչ եմ, ոչ թէ Սաւուղ եմ,
Հոգեւակէս հեռացած սիրոյ աշուղ եմ,
Ինձ չի կարող զնպիլ ամենայն բազուկ:

Այժմ հերթը հկաւ Ասմանին, բայց նա այս թեթև
սանդրանջ դիւանին ասաց նըանց փորձելու հա-
մար:

Իմ անձիս տէր, անձնանուէր, ունի սուրբ սէր հոգեւակս,
Անձնանուէր, ունի սուրբ սէր հոգեւակս, աղաւնեակս,
Ունի սուրբ սէր հոգեւակս, աղաւնեակս իմ տառորակս,
Հոգեւակս, աղաւնեակս, իմ տատրակս, անգին ակս:

Իմ կաքաւը, լաւից լաւը, անիրաւը տարել է,
Լաւից լաւը, անիրաւը տարել է, խանդարել է,
Անիրաւը տարել է, խանդարել է, խաւարել է,
Տարել է, խանդարել է, խաւարել է արեգակս:

Դռները փակ, մի մութ սենեւակ, նստած մենակ սիրական,
Մի մութ սենեւակ, նստած մենակ, սիրական անօգնական,
Նստած մենակ, սիրական անօգնական, իմ պատուական,
Սիրական անօգնական, իմ պատուական, հրեշտակս:

Աշուղները Ասմանի առած երդից ոչինչ չը հա-
կացան ու չը կարողացան նըա նման մի բան ասել.
լուսեցին, մնացին, տեսան որ այս նորեկ երիտա-

սարդը իրանց ասածը չէ, իրանց ատամները սրա
վրայ չի բահում, սաղերը վիր առան ու անխօս քա-
շուեցին այլտեղից: Այդ օրուանից նըանը հնարներ
էին մտածում թէ ինչպէս անեն որ Ասմանն այլտե-
ղից անպատճառ հեռանայ:

Մազրուպում, այդ բազմամարդ շատ չար ու
բարի տեսած պառաւ մայրաքաղաքում մի յետ ըն-
կած փողոց կար, արգարութիւն աչքից հեռու, խախկ
ու խայտառակութիւնների կենդրոն: Ինչպէս որ
տների ներքնայարկերում արև չի դիպչի, այնպէս էլ
այդ մոռացուած թաղից օրէնքի և արգարութեան
աշքը հեռու էր: Այդ թաղում բնակւում էր մի կա-
խարդ վհուկ, մի ջագու պառաւ. այդ խարեբայ կնոջ
բնակարանը արտաքուստ խիստ տղեղ էր երեսուն,
բայց ներքուստ բաւական գեղեցիկ կերպով զարդա-
րուած էր թանկագին կահ-կարսուիներով: Ցերեկը
այդ տեղ խաւար էր, իսկ զիշերները ցերեկ էր դառ-
նում այդ գժոխքի պէս տունը: Քաղաքում ինչքան
որ ստոր արարածներ կային, գալիս էին այդ տունը
պառաւից խորհուրդներ ստանում ու այնպէս զոր-
ծում: Զատ մարդու տուն էր քանդել, շատերին ան-
բախտացրել էր այդ շարագործ պառաւը ու օրէնքի
ձեռքից միշտ զուրս սողացել իրեն արգար ցոյց տա-
լով: Հենց վերոյիշեալ եօթն աշուղները Ապուտ ա-
ղայի սրճարանից դուրս զալով որոշեցին զիմել այլ

պառաւի օգնութեան Ասմանի զլիսին մի խաղ խազալու: Սապահին իւր ընկերներով մի գիշեր վեր կացան գնացին այդ կախարդի մօտ ու ասին: «Քեզ մի խընդիք ունենք մայրիկ, եկել ենք որ դու ճար անես: Ազուտ աղայի սրճարանում մի աշուղ է եկել, որ ասում են թէ Երզնկայի Խոսրով-Բէկի նախկին կառավարչի որդին է, անունը Ասման, ալէտք է այնպէս անես, որ նա այստեղից անյայտանայ, ինչպէս որ այստեղ է եկել մեր ապրուստը կտրուել է:» Այս ասելով Սապահին պառաւի բուռը դրեց հազար դահեկան: Պառաւ ջատուն «Ոլխիս վրայ» ասելով խօսք տուեց նրանց, որ կը կատարի նրանց հրամանը: Ահա մի օր նա երեկոյին գնում է Ասմանի մօտ հրաւիրում է նրան իւր տունը, ասելով թէ ես քո մօրաքոյըն եմ «զեռ զու չէիր ծնուել որ ես այստեղ եկայ, դրա համար իմ մասին ոչինչ չը գիտես» Ասմանը հաւատում է թէ ուղիղ է այդ կնոջ խօսքերը ու նրա հետ գնում են նրա տունը: Աբուտ աղան սրճարանից բացակայ էր այդ ժամին, դրա համար պառաւին յացողուեց խարել Ասմանին: Մտան ներս, տան յետեկի մասում մի ձառախիտ այգի կար, որ պառաւը անունը զրել էր հովարար այզի: Այդու վերեօւմ երեսում էր աւերակ շէնքերու մնացորդներ ու դարանաձեւ բացուածքներ: Մի քարայր կար այստեղ որը ճիշտ որ գեերու բնակարան էր, այնքան սարսափելի ու խաւար էր: Մի տաիլ, հէնց այդ քարայրը մի գաղտնի դարան է եղել, որտեղ շատ անմեղ մարդկանց է գլուխել անդութ ու անխիղն պառաւը: Խեղճ Ասման, քեզ

էլ էր վիճակուած ընկնել այդ գարշելի պառաւի լարած որոզայթի մէջ, երբ նա քաղել ուզեց քարայրի առաջը երևացող ծաղիկները, յանկարծ ոտքը սայթաքուեց ու ընկաւ ներս. Ծկզբում նա սարսափեց ու շուարեց, կարծում էր թէ երազումն է, բայց յետոյ խելքը զլուխը հաւաքեց ու տեսաւ որ ինքը մի տարտարոսի մէջ է գտնուում և այլ ևս հնար չը կայ աղատուելու. Ինքը իւր խաբուած լինելը հասկացաւ, բայց ուշ էր արդէն. Նա ուզեց մի քիչ առաջ դնալ, մէկ էլ մթութեան մէջ նրա աչքին երևացին մուայլ ու մեռելային դէմքեր. Ասմանը վախից ու սարսափից չը զիտէր ինչ անէք. մէկ էլ նրանցից մինը առաջ եկաւ ու ասաւ. «Ով ես դու խեղճ, անբախտ մարդ, դուն էլ մեր մթուառ վիճակին արժանացար». Ասմանը պատասխանեց. «Եյ՞ ես էլ, բայց դուք ով էք եղբայրներ և այստեղ ինչ էք շինուամ». «Ի՞նչ պիտի շինենք պատասխանեցին նրանք, այստեղ մեզ շատ չնշին կերպակուր տալով մթութեան ու խոնաւութեան մէջ մաշում ու մաղում են, մինչև որ մահը չար դեի պէս օրական մէկ մէկ մեզ կը վերջացնի. Ասմանը սաստիկ վախեցած ու յուսահատուած յոյսը միայն նատուժոյ վրայ դնելով երգեց հետեւալ երգը.

Յուլիսէփի պէս ատրատաբսի մէջ ընկայ, Հանիր դռ ինձ լրյա աշխարհը, Տէր Աստուած, Հոգեւակս ինձանից կտրօտ կը մնայ, Հանիր դռ ինձ լրյա աշխարհը, Տէր Աստուած:

Ես մը կախարդ կնոջ դարանը ընկայ, Մահի մե զգեստը, բանկոնը հագայ,

Խաբուելով դեերու տան մէջը մտայ,
Հանիր դու ինձ լոյս աշխարհը, Տէր Աստուած.

Փափագեցի կարմիր վարդին, խնձորին,
Ուկի կակոչ, արծաթ հասլի կոտրին,
Ինձ բաժին մի անիր, մահի որդորին,
Հանիր դու ինձ լոյս աշխարհը, Տէր Աստուած:

Երզը վերջացնելուց յետոյ, աղօթքն սկսեց, որ
Աստուած այդ փորձանքից աղատէ իրեն էլ, իւր
բախտակից թշուառ ընկերներին էլ: Աստուած խըդ-
ճաց այդ մարդկանց ու զիշերը Ասմանին երազում
ճգնաւորը երեաց ու ասաւ. «Մի վախենաք, զուք
բոլորդ էլ վազը ազատ կը լինէք, միայն այն պայ-
մանով, որ ամեն մէկդ էլ իսկոյն գնաք ձեր հայրե-
նիքները: Առաւոտը մեր բանտարկեալները որ զար-
թեցին, տեսան որ պառաւը ընկած է իրենց մօտ
յանկարծամահ եղած, իսկ զրսի դուռը բաց է թաղ-
նուած, մի մի անգամ անէծք կարդացին պառաւին
ու դուքս եկան լոյս աշխարհ: Ասմանը իսկոյն պա-
տահեց ճգնաւորին, որի հետ միասին մտան Արուտ
աղայի սրճարանիք: Ճգնաւորը շատ բարկացաւ, սպառ-
նաց սրճարանատիրոջ վրայ, որ Ասմանին չի պահել
ու պաշտպանել, ուզեցաւ անիծել, Ասմանը խնդրեց
որ ներէ նրան: Դուքս եկան այդ տեղից, եկան դաշ-
տը: Ճգնաւորը իւր ձին բերել տուեց ու Ասմանին
ազաւակը առնելով քշեց դէպի երզնկայ: Մինչև Աս-
մանը դես ու դէն կը նայէք ու գործի մասին կը
մտածէր ճգնաւորի սրընթաց ձին արագավազ ու ա-

րագաթուիչ թոշուի պէս հասաւ երզնկա: Տղան գառ-
նալով դէպի ճգնաւորը ասաւ. «Հայր իմ, իմ թշնա-
միս այդտեղ է չը լինի թէ ինձ մի վնաս հասցնէ:
Ճգնաւորն ասաց. «որ այդպէս է դու այդտեղ սպասիր
ես կը դնամ կը տեսնեմ ով կայ, ինչ կայ, ինչ է ա-
նում Զէջանը, նա մօտեցաւ այն ժամանակ երբ օրի-
րդը այգում ծաղիկներ էր քաղում փունջ պատրաս-
տելու համար. երբ նկատեց այգում մարդ մտնելլ
խօսքերն ուղղեց նրան ու երգեց. --

Ա. Ղ. Զ. Ի Կ. Բ.

Մի մոնիլ ճգնաւոր հայրիկ,
Ուսնածդդ չկայ այգում,
Պատրաստել եմ փունջ գեղեցիկ,
Մէջը կայ կինամոն քրիում:

Ճ. Գ. Ն. Ա. Ի Ո Ր Բ.

Մի բարկանալ սիրուն զաւակ,
Ես եկել եմ քեզ աեսութեան,
Չեմ քաղիլ վարդ ու մանուշակ,
Չեմ լինի գուեհի նման...

Ա. Ղ. Զ. Ի Կ. Բ.

Սուրբ ճգնաւոր, արի մօտիկ,
Մտիր այգին քաղիր ծաղիկ,
Ղըկիր հոգեակս իմ անուշիկ,
Խօսքս պահիր քու ականջում:

Ճ. Գ. Ն. Ա. Ի Ո Ր Բ.

Արդէն առել ես փափագդ,
Շուտ կը լինի քու պահակդ,

առար մարջ Զեմ ճանաչում քո հոգեակիդ,
Մի սոսկ հիւր եմ այսօք այս տան:
Նկատ սովոր թիւ Ա. Չ. Զ. Ի. Ը.
Ա. Չ. Զ. Ի. Ը.

Նա ինձ մերժեց բացէ ի բաց,
Թողեց, օտար երկիր զնաց,

Զէջանը լսեղմ, մենակ մնաց, առ պատշաճ համ
Ենթաթար տխուր արտում:

Ճպուր եմ խօսեմ համառօտ,
Տիրոջ անանց փառքին կարօտ,
Ես դնում եմ հոգեակիդ մօտ,
Ցիշատակ տուր տանեմ նրան:

Զէջանը մի գեղեցիկ ծաղկի փունչ տուեց ճղնա-
ւորին որը տանելով տուեց Ասմանին և պատմեց որ
աղջիկը տուած է Զալալ-Բէկին, երեսուն օր է հար-
սանիք է. աւարտելուն կայ զեռ էլի տան օր, տասն
օրից յետոյ Զէջանը յանձնում են Զալալ-Բէկին. Աս-
մանը մոլոր ու շուար շը զիտէր ինչ ելք գտնէր այդ
բանին, ինչ կերպ յայտնուէր հարսանիքի մէջ. ինչ-
պէս տեսնէր Զէջանին, մտածմունքների մէջ էր, մէկ
էլ մօտը եկաւ մի աշուղ, Արպապի անունով: Նա լսել
էր որ քաղաք է եկել մի երիտասարդ աշուղ, եկել
էր նրան տեսնելու, «Եթի քեզ հետ զնտնիք մի սիրոյ
նուազածութիւն անենք, մի մի երդ ասենք, այդ է
մեր աշուղական սովորութիւնը, որ նոր աշուղների
հետ փորձւում ենք: Ասմանը թէն սիրտ ու ժամանակ
շունէր երդ ու նուազի, բայց թասիբին կեր չարաւ

որ յետ մնայ մի այդպիսի առաջարկութիւնից, սազը
վերցրեց, աշուղ Արպապու հետ մտան մի սրճարան
ու նստեցին ածելու. Արպապին սկսեց հետեւեալը:—

Այսաւեղ մեղ լսում են զիտնականները,
Խօսիր որդիս, խելօք մարդկանց տեղ է սա,
Շնորհք, սէր ցոյց տալն է մեր նալատակը,
Խօսիր որդիս, խելօք մարդկանց տեղ է սա:

Ա. Ս Մ Ա. Ն Ը.

Փորձուելն է մեր գափաղը այս տւուր,
Ես էլ զիտեմ, խելօք մարդկանց տեղ է սա,
Եթէ շնորհք ունես, շնորհքդ ցոյց տուր,
Ես էլ զիտեմ խելօք մարդկանց տեղ է սա:

Ա. Բ Պ Ա. Պ Ի Ն.

Կանաչ, կարմիր, թուղթ ու գրիներ բերեն,
Խօսածներս զիտունները թող գրեն,
Մեր պահուատը ընծաներով զարդարեն,
Խօսիր որդիս, խելօք մարդկանց տեղ է սա:

Ա. Ս Մ Ա. Ն Ը.

Ես ունիմ մի գրախտ, հոտաւէտ պարտէզ,
Նրա սիրոյ զոհն եմ, որպէս ողջակէզ,
Ող ոյժ չունի, թող չը մանի ասպարէզ,
Ես էլ զիտեմ խելօք մարդկանց տեղ է սա:

Ա. Բ Պ Ա. Պ Ի Ն.

Դմաստունի խօսքն է յակինթ կարկեհան,
Ավ որ ընդունում է, երանի նրան,
Արպապու լրատը լսիր հոգի ջան,
Խօսիր որդիս, խելօք մարդկանց տեղ է սա:

Ա. Ս. Մ. Ա. Յ. Բ.

Ես Առմանն եմ, վառուած թիթեռի նման,
Խօսքեր խօսենք, մեղանից բան իմանան,
Հասկացողները թող վկացութիւն տան,
Ես իլ գիտեմ խելօք մարդկանց տեղ է սա:

Բանից դուքս է գալիս որ Ըրպապին Խոսրով-
Բէկի աշուղն է եղել, երբ տեսաւ որ նոր աշուղը
խելքը զլիսին երիտասարդ է, զնաց Բէկին ասեց, թէ
մի նոր աշուղ է եկել չնորհալի երիտասարդ, Խոսրով-
Բէկն խկոյն մարդ ուղարկեց որ հրաւիրեն իրենց
տուն հարսանիքին ներկայ լինելու և ածելու: Կրա-
կուած Ասմանը խկոյն եկաւ, Աննման Զէջանը գաղտ-
նի կերպով նայեց ու ճանաչեց իւր հոգու հատորին
և անհամբեր սպասում էր որ նա երգէ և նուազէ:
Ասմանը նստեց Խոսրով-Բէկի դիմաց ու սկսեց երգել,
իսկ Զէջանը իւր ընկերուհիների ու սպասուհիների
հետ վարագոյրի յետեից լսում էր երգեցողութիւնը:

Ա. Ս. Մ. Ա. Յ. Բ.

Ի՞նչպէս ախ չը քաշեմ տեսնելու համար,
Աչքերուս մէկ գեղանկար երեաց,
Սկ փափուկ մազերը, հիւսուած շար և շար,
Հոտով շահասպամ նպար երեաց:

Ալ սիրուն թշերը վարդի պէս կարմիր,
Վառուած թիթեռի պէս դառնում եմ մոլսիր,
Կինսատու աչքերուց վերև երկնաձիր,
Երկու աղեղնակերպ կամար երեաց:

Ես մնացի խմ պայմանիս հատատուն,
Քարկանալով խէթ մի նայիլ դէպ ինձ դուն,
Եղբ որ տեսայ կերպարանքդ ով սիրուն,
Ինձ փայլուն շողակ ու քանքար երեաց:

Ես Մաճնունն եմ Լէյլու սիրուն սիրահար,
Վէրքեր ունիմ որոնում եմ չը կայ ճար,
Երկու սիրող սրտեր առնելու իրար,
Այս գործը չը կամին դժուար երեաց:

Խոսրով-Բէկը շատ հաւանեց նոր աշուղի երգ ու
նուագածութեանը, բայց չը զիտէր թէ նա իւր նախ-
կին կառավարիչ Ղահըրմանի որդի Ասմանն է: Զէյ-
ջան խանումն էլ մի ծրար սլատրաստեց ուղարկեց
Ասմանին: Ասմանի ձեռքերը ուրախութիւնից թուլա-
ցան, խկոյն առանձնացաւ, բաց արեց ծրարը ու
կարգաց հետեւեալ նամակը — «Անդին Ասման, իմ աշքի
լոյս, դու բարով հա ար բարի ես եկել, լաւ իմացած
եղիր, որ հարսանիքը ահա երեսուն և չորս օր է շա-
րունակում է, մնացել է վեց օր, վերջին խօսքս այս
է. Երգըում նստող կուսակալ փաշան շատ բարի ու
արդարադատ մարդ է ասում են — արագընթաց սուր-
հանդակի ձի վարձիր, օր առաջ հասիր այն տեղ, մի
լաւ խնդիր տուր, որ նա միջամտէ հօրս մեր գործի
համար, այն է կամ յաջող կը վերադառնաս, կամ ե-
թէ ոչ կը գաս ինձ մեռած կը գտնես. որովհետեւ ես
չեմ ուզում Զալալ Բէկին յանձնուել, Բացի այս բա-
նից ուրիշ միջոց չը կայ, որովհետեւ հայրս միայն
Երզրումի փաշալից է վախենում ու նրա ոչ մի խօս-
քը չի վերադառնում, դէ՞ն, շուտ արա, սպասում եմ.

ցտեսութիւն, համբոյըներ...» Ասմանը նամակը ծալեց զըեց զբանը ու դուքս եկաւ, նա քայլերն ուղղեց գէպի իրենց տուն. վազուց է հօր ու մօր երեսները չէր տեսել: «Դնամ, գնամ մի ձեռքերը համբուրեմ որդիական պարտքս կատարեմ. ով գիտէ օտարութիւն է, գնալ չը գալ կը լինի, գալ ու վնտուածը չը գտնել կը լինի: Այսպէս մտածելով ուղղակի գնաց տուն: Ներս մտաւ, տեսաւ որ ծնողները այդքսն ժամանակում բաւական փոխուել են համարեա ծերացել. «Բարե ձեզ» ասաց Ասմանը. նըանք մի բոպէ շուարած նայեցին նորեկին ու յանկարծ վրայ վաղեցին ու վաթաթուեցին իրենց հարազատ որդուն: Ասման ջան, իմ աշքիս լոյս, զու բարով հազար բարի եկար, որտեղ էիր այսքան ժամանակ—հարցնում էր մայրը: «Թանկադին որդեակ իմ Ասման, զու իմ օր ու արև ասում էր հայրը. զու ուր էիր այսքան ժամանակ, զոնէ նամակներդ շուտ շուտ ուղարկէիր: Երկար ժամանակ հայրը մայրը իրենց անգրանիկ ու մինուճար որդուն ձեռքէ ձեռք էին տալիս. մէկը վաթաթում էր ու համբոյըներով ու արտասուքով Ասմանի երեսը թռչում, տալիս էր սիւսին, յետոյ էլ նա էր առնում զրկի մէջ սեղմում: Վերջապէս հանգստացան, սրտերը հովացաւ ու նատեցին միմիանց պատմելու իրենց զլսի անցածը: «Փառք քեզ ամենակարող Աստուած որ կատարեցիր իմ խնդիրը, էլի իմ որդուն իմ ձեռը հասցըիր. ասում էր հայրը—շատ ուրախ եմ որ արժանի եղանք այս օրուան»: «Մատաղ լինիմ քո անուանդ ու արեիդ իմ անդին Ասման ա-

սում էր մայրը. ինչու այսպէս ուշացար, քո հարսնացու Զէջանը նշանուել է ուրիշի հետ ու հիմա հարսանիքն է, մի քանի օրից յետոյ նրան տէր կը դառնայ Զալալ-Բէկը»: Ասմանը միամտացնում էր որ աղջկայ հոգին իւր հետ է և զեռ յոյսը կտրելու չէ: Այսքան նեղութիւնը քաշել ենք, մի նեղութիւն էլ այն է լինելու, որ այժմ և եթ, իսկոյն գնալու եմ երգըում այնտեղի կուսակալի միջնորդութիւնը խընդրելու և յոյս ունիմ որ պիտի յաջողուի ինձ վաղ թէ ուշ Զէջանի ընկելը լինելու. իւր սիրու բաց արաւ երգով սազը վերցրեց ու սկսեց այսպէս:

Հոգիս հայրիկ, նորից ցաւի մէջ ընկայ,
Սրդարագատ ալաշտապանի մօտ գնում եմ,
Կենակցիս խում են ձեռքիս ճար չը կայ,
Ցաւիս համար դարմանի մօտ գնում եմ:

Ո՞չ իմ հայրիկ, թշնամիքս չիմացած,
Իմանալով վաս միջոցի չը գիմած,
Հոգուս կէսը ուրիշները դեռ չառած,
Հոգու բժիշկ Առիմանի մօտ գնում եմ:

Գէոքերը չեն թողնում, վավագիս հասնեմ,
Իմ աննմտն վարդս քաղեմ ու հրճուեմ,
Այսոց մի տար կենակցս քեզ աւանեմ,
Մէկ վեհ հզօր, իշխանի մօտ գնում եմ:

Ասմանն եմ, իմ բանս շատ դժուար բան է,
Տէր իմ Աստուած նեղութիւնից ինձ հանէ,
Սողոմնի նման դասու դատ անէ,
Ահեղ արդար տտեանի մօտ գնում եմ:

Երգը վերջացրեց ու էլ ժամանակ չը կորցրեց
ամաք բարով ասեց ծնողներին ու ընկաւ ճանապարհ
դէպի էրզըում։ Հասնելով այդ քաղաքը մի խնդիր
պատրաստեց կուսակալ փաշայի անունով, սրտաշարժ
նկարագրեց իւր ամեն նեղութիւնը և գլխից անցա-
ծը։ Գիշերը մի կերպ անցկացնելով հետեւալ օրը
Աստուած կանչեց ու խնդիրը վեր առնելով քայլերն
ուղեց դէպի կուսակալի ապարանքը։ Նրան ներկա-
յացրին փաշային։ Ասմանը ներս մտնելուն պէս չո-
գեց ու խնդիրը յանձնեց նրան։ Փաշան հրամայեց
վեր կենալ սպասել մինչև որ ինքը խնդիրը կարդայ։
Երիտասարդը վեր կացաւ ու սազը թեկ տակ դնե-
լով կանչեց։ Փաշան խնդիրը կարդալիս շուտ շուտ
նայում էր Ասմանի երեսին։ Երբ որ վերջացրեց ա-
սաց։ «Խեղճ տղա, այդ որքան չարչարանք ես քաշել
մի աղջկայ համար, երեկ շատ ես սիրում։ Այդ ինչ
է, սակ ունիս. երգել էլ գիտես, հապա մի բան եր-
գիր տեսնենք։ Ասմանը ոյժերը հմտաքեց ու տխուր
ձայնով երգեց հետեւալ խնդրողական երգը։

Ժողովրդի տէր ու պաշտպան առաջնորդ,
Առ խնդիրս, ամեն մի բան քու ձեռքդ է,
Երկրի տէր, թագաւորի փոխանորդ,
Բոլոր գործոց, հրամանը քու ձեռքդ է։

Տէր իմ, իրաւունքիս դու եղիր պաշտպան,
Առ կարդա, խնդիրս տուր մէկ հրաման,
Աստուծոյ կամքովը եղել ես իշխան,
Մարդկանց դատը, դատաստանը քու ձեռքդ է։

Գործդ արդար բանէ իշխանակայել,
Մեծ յոյսով հաւատով, քեզ մօտ եմ եկել,
Կաղազեմ, խնդիրս վարուան մի թողնել,
Տէրը գնա ես, դատաստանը քու ձեռքդ է։

Ես Ասմանն եմ, ուրիշ բարեկամ չունիմ,
Փեզ եմ զիմում, դու ես տէր, ինձ մտերիմ,
Բարձր պատուիդ համար, մեծափառ տէր իմ,
Տէկ չար արա միծ դիւնը քու ձեռքդ է։

Ապրիս Ապման, ապրիս, լաւ ես երգում, ես հա-
ւատացի որ դու շատ ես սիրում Խոսքով-Բէկի աղ-
ջկան, բայց այդ ինչ անզութ մարդ է եղել Խոսքով-
Բէկը, ես նրա մասին միշտ զովեստներ էի լսել։ Նա
ինչու է դէմ այդ գործին, քանի որ գլխաւորը, աղ-
ջկայ կամքն է, որ քու կողմդ է։ Փաշան կանչեց իւր
գլխաւոր զօրականներից մէկին, բաւական ձիաւոր
զօրքեր տալով Խոսքով-Բէկի անունով մի պաշտօնա-
կան հրամանագիր գրեց ու հրամայեց որ զնա շտա-
պով երգնկա, աշխատի կամքսվ առնի նրա աղջկան
ու յանձնի Ասմանին, իթէ լընդիմացաւ, այն ժամա-
նակ ոյժ գործ դնէ ու սաստէ այն անզգամին։ Փա-
շայի հրամանը կատարուեց։ Զօրապետը զօրքերի և
Ասմանի հետ միասին նոյն օրը ճանապարհ ընկաւ
երգնկա։ Խսկոյն իմաց տուին Խոսքով-Բէկին թէ փա-
շայի գլխաւոր զօրապետը մի քանի հարիւր քաջ զին-
որներով զալիս է Բէկի մօտ։ Հարսանիքի վերջերն
էր քառասուն օրը լըանալու վրայ էր. ամենքը ու-
րախ տըամադրութեամբ դուրս եկան փաշայի մարդ-

կանց գիմաւորելու, Խոսրով-Բէկը իւր ապարանքը ընդունեց զօրապետին իւր թիկնապահներով։ Զօրապետն ասեց, որ փաշայից մի շատ չտապ հրամանագիր ունի Բէկի անունով ու ուղում է որ հրապարակով կարդա։ Մեծ դահլիճում հաւաքուեցին բազմաթիւ պատուառը հիւրեք. Խոսրով-Բէկն ու Զալալ-Բէկը բազմեցին իւրեանց բազկաթուների վրայ, իսկ Ասմանը աննկատելի, ճանապարհորդական գծուծ շորերով խառնուած էր փաշայի մարդկանց մէջ։ Երբ զօրապետը առաջ եկաւ, ժողովուրդը կանդնեց ոտքի ու նա ձեռքին բռնած փաշայի հրամանագիրը, ժողովրդի մէջ տեղում կանգնեց ու թուղթը բաց անելով նախ համբուրեց յետոյ զրեց գլխի վրայ ու վար բերելով կարդաց հետեւալը։

Պայծառափայլ իշխան Երգնկայի

Պատուաւոր գաւառապետ Խոսրով-Բէկին երգումի ամենափայլ և լիազօր Կուսակալ Մաքսուտ փաշայից հրաման և ողջն։

«Յայտնի լինի քեզ ով գաւառապետ իշխան Խոսրով-Բէկ, որ քո ազնիւ գուստը Զէջան խանումի ամուսնութիւնը պատուելի Զալալ-Բէկի հետ կայանալու չէ, որովհետեւ նախ աղջիկդ նրան չի ուզում, երկրորդ Զէջանի իսկական վեստացուն, օրինական ընկերը, քո նախկին կառավարիչ Դահլըման աղայի որդի Ասմանը կենդանի է և բողոքում է այդ բանի գէմ։ Նրա բողոքը արդար է և ես իմ իշխանական ձայնը միացնում եմ այդ բողոքի հետ ու բարեկամաբար հրամայում եմ քեզ տալ քո աղջիկը Ասմա-

նին։ Յոյսով եմ զործը խաղաղութեամբ կը վերջացնես ու ինձ կը թողնես քո մշտական բարեկամը։ Հակառակ դէմքում իմ քաջ զօրապետը իւր արկածան զօրերով կը կատարի իմ ցանկութիւննը և արդար պահանջը։ Սպասում եմ պատսսխանիդ։

Մնամ քո բարեկամը և իշխանաւորը երգումի լիազօր Կուսակալ Մաքսուտ Փաշա։

Այս հրամանազը ընթերցումից յետոյ մի քանի ըովէ տիրեց մի խորհրդաւոր լուսներին, բոլորը նայում էին Խոսրով-Բէկի ու Զալալ-Բէկի երեսները։ Նրանց գլուխները պտուտ էին գալիս, ականջները զժժում էին, չը գիտէին ինչ պատասխաննեն։ Փաշայի զօրապետը հարցըրեց ինչ ես ասում Խոսրով-Բէկ, խօսիր, յայտնիք ինձ քո անելիքը, որ ես իմ տիրոջը իմաց անեմ։ Ահա քեզ մօտ է այս ըովէիս, քեզնից հալածուած ու վոնդուած Ասմանը, քո ազջկայ փառք ու պարծանք երիտասարը. առաջ արի Ասման, թող քեզ ամեննքը տեսնեն, Ասմանը առաջ եկաւ, բոլոր հանդիսականները զարմացած նայում էին նրա երեսին։ Միթէ գու զեռ կենդանի ես այ տղա, ասաց Խոսրով-Բէկը, բա ինչո՞ւ ինձ մօտ չեկար, չը հարցըրե, որ մէկ էլ գնացիր մեր փաշային նեղութիւն տուիր։ «Ենհոգ եղիր Պ Գնդապետ, Կուսակալ փաշայի բարեկամական խորհուրդն ու հրամանը կատարուած է», ասաց զօրապետին Խոսրով-Բէկը, միայն պէտք է հարցնել թէ ինչ է ասում Զալալ-Բէկը։ Զալալ-Բէկին մօտ կանչեցին, ինչ պիտի ասէր երբ որ բանը այնտեղ էր հասել, որ ուզէր չուզէր պիտի

Զէջանը Ասմանինը լինէր: «Ես համաձայն եմ, մի
բան որ Աստուած է տնօրինել, ես ինչ պիտի ասեմ»:
Բէկի ասեց մի բան միայն ինձ տանջում է այն է՛ս որ
ես առաջ երգում էի կերել խմել Ասմանի արիւնը.
հիմա այդ երգումս զբժում եմ, որ ինձ համար շատ
դժուար է»: Զօրապետն ասեց, որ այդպէս է այս
ըստիս ես զըա հնարը կը գտնեմ. նա հանեց դա-
շոյնը, Ասմանի ճկուտը մի քիչ կտրեց արիւն հանեց
ու շաքարախառն օշարակով խմացրեց Բէկին ու ա-
մեն բան վերջացաւ. Ասմանը. Բէկի ձեռքը բռնեց
համբուրեց, նա էլ իւր նոր վեսայի ճակատը ու ընդ-
հանուր ուրախութեամբ հարսանիքին նոր ուղղութիւն
տուին: Խոկոյն կանչեցին Ասմանի ծնողներին, Բէկը ու
Ղահրմանը զբկախառնուեցին, ներեցին միմեանց ու
այդ երկու ընտանիքներու մէջ նորից սէր ու հաշտու-
թիւն տիրեց: Քալալ Բէկի սիրտը շահելու համար ա-
ռաջ մի համեստ ազջիկ դտան ու նրա հետ պսակեցին.
Եօթն օր եօթ գիշեր հարսանիք արին: Յետոյ հերթը
եկաւ մեր Ասմանին ու Զէջանին: Ասմանը իւր խօսքն
արեց, յաղթող եղաւ բայց զեռ այնքան ուրախ
չէր, զօրապետը նրան երգել տուեց հետեւալ երգը:

Վաղուց է որ օտար երկիր ման կուգամ,
Թրթուում է սիրտա գաղար չի լինի,
Օտար երկրում եղաւ մարդը մի անգամ,
Կը թոշնի արեր երկար չի լինի:

Խեղն սիրահարները արդեօք ինչ անեն,
Ելոց զբոցները մարդու կոստանեն,

Այժմեան սիրունները փոփոխական են,
Նրանց սէրը լիակատար չի լինի:

Եվ տիրեց սիրտա ուրախ ու գուարթ,
Տեմ գտնում սրտակից մէկ երիտասարդ,
Երբ որ տուած խօսքից կը դառնա, մէկ մարդ,
Հաւատ չունի, նա բարերար չի լինի:

Ես Ասմանն եմ, սա ինչ բանէ, ինչ դաւ է,
Քու տանջանքդ մահից առաւել ցաւ է,
Ինձ պանդիտիս այսքան զրկանքը բաւ է,
Աընտէրն էլ այդ ահապկ չոր չի լինի:

Այս երգը բոպէական ազգեցութեան տակ ա-
սուած բան էր. յետոյ ամեն վիշտ մոռացուեց: Հա-
սուած աղջիկները և զահիլ հարսները Զէջանին կա-
նաչ ու կարմիր հապցըած գուրս բերին ձեռքը տուին
Ասմանին. հիմա հերթը ձերն է ասացին, միմեանց
կարօտն առէք, սիրեցէք ու սիրուէք: Աստուած բա-
րի վայելում տայ, Զէջանի մայրը շատ ուրտիս չէր.
Նրա սրտովը չէր այս անսպասելի փոփոխութիւնը,
բայց ճար չը կար, եկաւ չնորհաւարեց ու Ասմանի
մօր հետ համբուրեցին իրենց որդոցը: Ասմանը ստ-
գը ձեռքն առաւ ու երգեց իւր սիրելու համար:

Սիրուն, վերցրու երեսիդ զիմակը,
Հոգով սրտավ նոր միանանք հիմա, ևի,
Ուրախութեան փոփոխցաւ մեր վիճակը,
Փոփողներուս արդէն հասանք հիմա եկ:

Հագիբր տեսնեմ կանաչ կարմիր ու ալպ
Նորից լսեմ քաղցր ձայնդ խօսալլը,
Ես սիրում եմ կաքտի պէս մանդալդ,
Զեռք ձեռքի տանք, մի տեղ մանդանք հիմու եկ

Զար թշնամին ինքն իրան խեղսուել,
Հար փորողը, փորած հորը թող ընկնի,
Ուխտ եմ արել եօթը մասագ կըտրուի,
Քաղցը կերպով ուրախանանք հիմա եկ:

Ասմանիդ հետ ուրախացիք իմ Զէջան,
Հանիք սեը, հաղիք ճերմակ պատմուան,
Վաս խօսքերը մէջ տեղից թող վերանան,
Երգենք, պարենք, խաղանք, խնդանք, հիմա եկ:

Հարսանիքը վերջացաւ. հանդիսակամները մի
անգամ էլ չուրհաւորելով ուրախ սրտով վերադար-
ձան իրենց տները. Կուսակալի մարդիկն էլ դարձան
էրզըում յայտնելով փաշային գործի յաջողութիւնը:
Ասմանն ու Զէյջանն էլ փառք տալով Արարշին ան-
մեղ աղաւնիների նման զունդունալով կշկշալով մտան
իրենց ննջարանը: Սյդպիսով շատ նեղութիւններ քա-
շելուց յետոյ վերջը հասան իրենց նպատակին:



ՀԱՅ. ԳՐԻԳՈՐԵԱՆՑԻ ԿՈՎԿԱՍԵԱՆ ԳՐԱՎԱՆԱՌՈՒՆՈՅ,

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆԵՐԻ.

1. ՔՅՈՒ ՕՉԼՈՒԽԻ ՀԵՔԻԱԹՔ,
փոխաղբեց աշըզ Զամալին, . . . գինն է 40 կ.

2. ՄԱՍՈՒԽՑԻ ԴԱԻԻԹ—ԴԻԻՑԱԶԱ,
հիւսնց Պ. ԾԱՂԱՐՐԻԿԻԱՆց . . . գինն է 20 կ.

3. ԱՐԵՖ, Կարմէն Միլիա գինն է 10 կ.

4. ԱՄՄԱՆ ու ՁԵՅԱՆԻ ՀԵՔԻԱԹՔ,
փոխաղբութին Քիւանի գինն է 25 կ.

ԳԻՆՆ Է 25 կ.

Գումարով առնողներին 20% զեղչ.

16415

2013

